<<ԲԱԼԱՀՈՎՏԻ Ի. ՎԻՐԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՎԱԿՆՈՐԴ՝ ԼԻԼԻԹ ԿԱՌԼԵՆԻ ՄԻՍԱԿՅԱՆ



2023թ.

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**<<Կրթությունը գիտելիքների քանակ չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես>>:**

**Ադոլֆ Դիստերվիգ**

**(գերմանացի մանկավարժ, փիլիսոփա)**

Հարփոփոխ աշխարհում դպրոցն իր առաքելության մեջ շեշտը պետք է դնի ուսման տարբեր կարիքների ապահովման, սովորողին ողջ կյանքի ընթացքում անհրաժեշտ հմտությունների և կարողունակությունների, հստակ դիրքորոշման և արժեհամակարգի ձևավորման վրա:

<<**Սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության ձևավորման գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների դիրքորոշումների հիման վրա՝ ըստ իրավիճակի արդյունավետ և պատշաճ արձագանքելու, կողմնորոշվելու, գիտելիքները կիրառելու կարողունակությունները**>> **(Հանրակրթության պետական չափորոշիչ հոդված 2, կետ 6)** այսօրվա հրամայականն է:

Այս մոտեցմամբ էլ պայմանավորված բազմաթիվ նոր մարտահրավերներ են ներկայացվում հանրակրթության համակարգին, որի անբաժան մաս է կազմում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վրա հիմնված կրթության պատշաճ իրականացումը: Այս համատեքստում հաստատության զարգացման ծրագրի առանցքն եմ համարել՝ **<<Հավասարությունը կրթական գործընթացում>>, <<Կրթական հնարավորությունների հավասարություն>> ձևակերպումները:**

Դպրոցը պետք է երաշխավորի ժողովրդական հասարակության համար ազատ **անհատի** ձևավորումը՝ խթանելով լեզվական, սովորել սովորելու, տնտեսական, մեդիա, ինքնաճանաչողական, վերլուծական և քննադատական մտածողությանը: Դպրոցը պատասխանատու է գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի փոխանցման, կարողունակությունների ձևավորման, յուրացման համար, որոնց հասնելու հիմքը որքան ուսուցումն է, նույնքան էլ ուսումնառությունը: **Դպրոցի գործունեությունը նպատակաուղղված է հավասարապես, հասանելի, ներառական և որակյալ կրթության ապահովմանը (Հանրակրթության պետական չափորոշիչ հոդված 1, կետ 3):**

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**Փաստաթղթի անվանում**-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի <<Բալահովտի Ի. Վիրաբյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիր

**Իրավական հիմքեր՝** Հաստատության զարգացման հեռանկարային ծրագիրը կազմել է Հայաստանի Հանրապետության կրթության, մշակույթի և սպորտի նախարարի 22 սեպտեմբեր 2022թ. N 35-Ն հրամանով հաստատված պետական հանրակրթական զարգացման ծրագրի մշակման պահանջներին և ձևաչափին համապատասխան: Հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավարության փետրվարի 9-ի N181-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի պահանջը:Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 18 ապրիլի 2023թ. №399-Ա հրամանի պահանջները: Ինչպես նաև

- ✓ <<Կրթության մասին>> ՀՀ օրենքը
- ✓ <<Հանրակրթության մասին օրենքը >> ( 2022թ. փետրվարի 9)
- ✓ <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի՝ Հանրակրթության պետական չափորոշիչը
- ✓ (<<Հավելված ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 2 N 137-Ն որոշման) օրինակելի կանոնադրությունը
- ✓ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքը
- ✓ <<Ստանդարտացման մասին>> ՀՀ օրենքը
- ✓ <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքը

Հայաստանի Հանրապետության կառավարության 22 սեպտեմբերի 2022թ. N1481-Ն որոշումը ( Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ Պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները ր մեթոդաբանությունը սահմանելու մասին)

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 7-ը դեկտեմբերի 2022թ. N79-Ն հրամանը

Առողջապահության նախարարի 28 մարտի 2017 N12-Ն հրամանը

<<Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան>>

Հաստատության զարգացման ծրագիրը գրելիս նաև հաշվի է առնվել հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները, որոնք ձևավորվել են նրանց հետ հանդիպումների արդյունքում **(հիմք՝ ՀՀ կառավարության որոշում 9 փետրվարի 2023թ. N181-Ն հրամանի հավելվածի որոշման (հոդված 16, կետ 1):** Հաշվի են առնվել նաև հաստատության տնօրենի, տնօրենի տեղակալների, մեթոդմիավորման նախագահների, դասղեկների վերջին 5 տարիների հաշվետվությունները, դպրոցի ներքին գնահատման վերջին 3 տարիների հաշվետվությունները:

# 1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

**Հաստատության անվանումը**- <<Բալահովտի Ի. Վիրաբյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

**Հաստատության հասցեն**-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, գ; Բալահովիտ, Լ. Ավետիսյան 1-ին նրբանցք, թիվ 7

**Էլեկտրոնային հասցեն**- balahovit@schools.am

**Հաստատության ինտերնետային կայքի հասցեն-** https://balahovit.schoolsite.am/

**Փոստային դասիչ**-2213

**Դպրոցի հիմնադրումը**- 1943թ.

**Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը**-1970թ.

**Անվանակոչվել է-** Արցախյան ազատամարտի մասնակից, ազատամարտիկ Իսահակ Վիրաբյանի անունով 2002թ.

**Դպրոցի կանոնադրությունը-** Հաստատվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2023թ. 5-ը մայիսի N112-Ա որոշմամբ (վերջին փոփոխությամբ)։

**Պետական ռեգիստրում գրանցման համարը**-4221001985

**Պետական ռեգիստրում գրանցման ամսաթիվը**-03210601

**Դպրոցի շենքը**-տիպային

**Մակերեսը**-3083.65 քմ

**Նկուղային հարկի մակերեսը**-324.00քմ

**Դպրոցի տիպը ըստ իրականացվող հիմնական ծրագրերի**-ընդհանուր

**<u>Դպրոցի տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի</u>**-միջնակարգ՝ ըստ կրթական ծրագրերի(1-12-րդ դասարան)

Ըստ կրթական ծրագրերի դպրոցն իրականացնում է **նախադպրոցական կրթական ծրագիր**:









**<u>Աշխատանքային շաբաթ</u>**-5-օրյա

**<u>Աշխատանքային ռեժիմ</u>**-միահերթ

**<u>Հարկայանությունը</u>**-2

**<u>Նախագծային հզորություն</u>**-420 աշակերտի համար

**Փաստացի հաճախող աշակերտների թիվը**-424

**ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը**-5

**Օտարերկրյա քաղաքացի աշակերտների թիվը**՝ -5 (մասնավորապես Իրաքի Քրդիստանից)

**Ազգային փոքրամասնություն հանդիսացող աշակերտների թիվը-5**

**Նախակրթարան միջին խումբ**-15

**Նախակրթարան ավագ խումբ**-20

**Ջրամատակարարումը**-շուրջօրյա կենտրոնացված

**Կոյուղացումը**-կենտրոնացված (վնասված)

**Ջեռուցումը**-կենտրոնացված

Պետության կրթական քաղաքականության հիմքում կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրն է: Հիմք ընդունելով առկա մարտահրավերները և կրթության համակարգում արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ սահմանվել է կրթության ոլորտի զարգացման գերակայությունները, ռազմավարության սկզբունքներն ու ծրագրային ուղղությունները:

**Ծրագրի նպատակ-** Ծրագրի կենտրոնում մարդն է, իսկ նրա կարողությունների ընդլայնումը մարդկային կապիտալը զարգացնելու և իրացնելու միջոց:

**Ծրագրի տեսլականի հիմքում-** Հայաստանի վերափոխման ռազմավարությունն է, և հատկապես գերնպատակ է գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների, համատարած ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենալ քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, ում համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների կատարումը:

**Ծրագրի վերջնական նպատակն է**- Ձևավորել ազգային և համամարդկային արժեքների հիման վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ և անմիջականորեն մրցունակ կրթական համակարգ: Վերջնական նպատակի իրականացման համար մինչև 2030 թվականը սահմանվել են հետևյալ ռազմավարական ուղղությունները:

**Համընդհանուր, ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում**-որը յուրաքանչյուր քաղաքացու համար կյանքի բոլոր փուլերում հասանելի կդարձնի իր զարգացման և անձնային առանձնահատկություններից բխող որակյալ և արդյունավետ կրթական ծառայությունները՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և արտերկրում:

**Կրթության արդյունավետության բարձրացում**-ինչը կապահովի ռեսուրսի (ներառյալ մարդկային) առավելագույն, օպտիմալ և արդյունավետ տեղաբաշխում, համակարգի գործընթացային, ծախսային և կառավարման արդյունավետության բարձրացում:

**Կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում ու արտահանում**-որը խարսխված է լինելու միջազգային կրթական տիրույթում և համակարգերում հայկական կրթական համակարգի ամբողջական ինտեգրմամբ:

Կրթության ռազմավարության պետական ծրագիրը կապահովի մինչև 2030թ. հետևյալ արդյունքային շրջանակը:

- **Բոլոր բնակավայրերում մատչելի նախադպրոցական ծառայություն**
- **Բոլոր դպրոցները կունենան պատշաճ կահավորված և արդիական սարքավորումներով հագեցած սանիտարահիգիենիկ, անվտանգ, համընդհանուր մատչելի շենքեր:**
- **Որակավորված և սահմանված ստանդարտների համապատասխան ատեստավորված մանկավարժական կազմ՝ արժանապատիվ վարձատրությամբ:**
- **Ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից և այլ կարևոր դրույթներ:**

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը>> <<Բալահովտի Ի. Վիրաբյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի 5-ամյա (2023-2028թթ.) զարգացման ծրագրի հիմքում դրվել են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ծրագրերը և զարգացման հայեցակարգերը, <<Կրթության մասին>> օրենքի (4-րդ, 5-րդ, 6-րդ հոդվածները), ինչպես նաև Բալահովիտ համայնքի առանձնահատկությունները: Հիմք է ընդունվել դպրոցի արդեն իսկ արձանագրած ձեռքբերումները, առկա և ապագա աստիճանական զարգացումը՝ նախանշելով զարգացման գերակա խնդիրները: Օրենքի պահանջներից ելնելով հաստատությունը իրականացնում է կրթության բնագավառում պետական քաղաքականությանը միտված գործունեությունը, որը և՛ նպատակ է, և՛ գերխնդիր, և՛ գործունեություն, և՛ ընթացք, և՛ արդյունք

Դպրոցը դաստիարակում և շարունակելու է դաստիարակել՝ **<u>Ազատ անհատներ՝</u>** գիտելիքահեն կրթությունից անցում կատարելով կարողունակահեն կրթության՝ ձևավորելով՝

- ✓ համակողմանի զարգացած.
- ✓ քաղաքական բարձր գիտակցությամբ.
- ✓ ազգային արժանապատվության կրող.
- ✓ հայրենասեր.
- ✓ մեղիագրագետ
- ✓ կարողունակ
- ✓ իրավագիտակից
- ✓ օրինակելի
- ✓ քննադատական և վերլուծական մտածողություն ունեցող.

- ✓ բնապահպանական աշխարհայացքի տեր.
- ✓ սեփական դիրքորոշում ունեցող.
- ✓ մրցունակ.
- ✓ ինքնաճանաչ և աշխարհաճանաչ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:

**Կրթության մատչելիությունը**

Կրթությունը մատչելի է, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը՝ սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին, հնարավորություններին պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ:

Հաստատությունը գործում է և կառավարվում է ժողովրդավարության սկզբունքներին համահունչ:

Հաստատությունը պետության բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան:

# 1.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.1 «Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան, որն անհրաժեշտ է կրթական, հետազոտական, գիտաարտադրական գործունեության և կրթական բնագավառի այլ խնդիրների լուծման համար, ստեղծվում և զարգացվում է բյուջետային, ինչպես նաև միջոցների հաշվին՝ կրթության զարգացման պետական ծրագրի և ուսումնական հաստատությունների զարգացման ծրագրերի հիման վրա»: (<<Կրթության մասին>> ՀՀ օրենք հոդված 4, օրենքի 48-րդ հոդվածի փոփոխությամբ):

**<u>Դպրոցն ունի</u>** -22 դասասենյակ, ընդհանուր ծավալը՝ 929,3քմ

1 լաբորատորիա-18,45քմ

1 <<Արմաթ>> ճարտարագիտական աշխատանոց -27,75քմ

1  ուսուցչանոց-52,30քմ

1 բուժկետ(ախտահանման սենյակ)-25,7քմ

1 ճաշարան-77,9քմ

1 հանդիսությունների դահլիճ-124,8քմ

1 մարզահրապարակ- 1000 քմ

1 մարզադահլիճ-149,1 քմ

1 գրադարան+ընթերցասրահ-51.2քմ

7 սանհանգույց (միասին)-49,00քմ

1 նկուղ-324,00քմ

արևային կայան-35 ԿՎՏ հզորությամբ

1 առանձնասենյակ-42,2քմ

1 նախակրթարան-75,2քմ

սմարթ դասասենյակ-56,4քմ

ինտենսիվ հատապտղային այգի-700 քմ

ինտենսիվ պտղատու այգի-1000 քմ

Ուսումնական հաստատության գույքի տեխնիկական բնութագրերը հիմնականում համապատասխանում է օրենքին և առողջապահության նախարարի 28.03.2017թ. 12-Ն հրամանի պահանջներին(հավելված ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ. օգոստոսի 26-ի N21-Լ հրամանի ):

# ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

| Ցուցանիշ | Տվյալներ |
|---|---|
| գրադարանի տարածքը քմ-ով | 51.2 |
| գրադարանում համակարգիչների թիվը | 1 |
| գրադարարանում կամ ընթերցասրահում նստատեղերի թիվը | 20 |
| գրադարանային ֆոնդում առկա գրքերի (բացառությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերի) ընդհանուր թիվը, այդ թվում | 6224 |
| -գեղարվեստական գրքերի թիվը | 4610 |
| -տեղեկատվական գրքերի թիվը (բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն) | 1030 |
| -ուսումնամեթոդական գրքերի թիվը | 82 |
| -ամսագրերի թիվը | 98 |
| -այլ | **72** |
| վերջին անգամ գարդարանային ֆոնդի նոր գրականությամբ համալրվելու տարեթիվը | **2023** |
| գրադարանից միջինում ամսական օգտվողների թիվը | **150-200** |

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ

## ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| գրադարանը վերանորոգված է | գրադարանը թվայնացված չէ |
| գահավորված է, ունի ընթերցասրահ | կարիք ունի նոր հրատարակված գրքերի և հատկապես բառարանների |
| ունի նոր գրքերի ցուցադրման պահարան | |
| գրադարանից օգտվողների թիվը օրեցօր ավելանում է | |
| գրադարանում անցկացվում են դասեր, գրական քննարկումներ | |

### ՆՊԱՏԱԿ

Ունենալ գրադարան- գրքային ֆոնդի ռեսուրս կենտրոն՝ հագեցած նոր գեղարվեստական և մասնագիտական գրականությամբ:

**Խնդիր՝** գրավիչ, ուսանելի ընթերցասիրությանը նպաստող գրադարանի ստեղծում

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ | ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|---|
| թվայնացնել գրադարանը | 2023թ. մինչև դեկտեմբեր | տնօրեն, գրադարանավար, տնտեսվար | |
| համալրել գրքային ֆոնդը նոր տպագրված հայակական և արտասահմանյան գրականությամբ | 2023-2028թթ. | տնօրեն, գրադարանավար, տնտեսվար | |
| ձեռք բերել բառարաններ, մասնագիտական ուղեցույցներ, հանրագիտարաններ | 2023-2028թթ. | տնօրեն, գրադարանավար, տնտեսվար | |

## ՌԻՍԿԵՐ

Գրադարանավարի՝ ժամանակակից տեխնոլոգիաների թույլ տիրապետում:

## ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Գրադարանավարին մասնակցությունը ՏՀՏ դասընթացներին՝ ըստ ոլորտի:

## Հաստատության <<ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն>> առարկայի նյութատեխնիկական ապահովվածությունը

| N | Անվանում | Տեխնիկական բնութագիր | Ձեռքբերում |
|---|---|---|---|
| 1 | ուսումնական զենք (АК 74)՝ յուղման պարագաներով | կրակի հեռավորությունը 400-500մ հրաձգային նշոցային հեռավորությունը 1000մ | տրամադրել է Պաշտպանության նախարարությունը |
| 2 | օդամղիչ հրացան | մինչև 50 կրակոց րոպեում տրամաչափը 4.5 մմ, փողի ուժը 30 ջոուլ | ձեռք է բերվել զինվորական խանութից |
| 3 | ուսումնական նռնակներ | Ֆ-1<br>ՌԳԴ-5 | տրամադրել է Պաշտպանության նախարարությունը |
| 4 | կողմնացույց (Ադրիանովի) | նշոցային համակարգով պտտվող կափարիչ, սանդղակ, մագնիսական սլաք, հաշվարկի ցուցիչ, արգելակ | ձեռք է բերվել սպորտային խանութից |
| 5 | տեղագրական ուսումնական քարտեզներ | | տրամադրել է Պաշտպանության նախարարությունը |
| 6 | սեղան զենք մաքրելու համար | 12000X750 X850 մմ | պատրաստվել է դպրոցում |
| 7 | ուսումնադիդակտիկ ցուցապաստառներ | ՆԶՊ առարկայի ծրագրի պահանջներին համապատասխան | տրամադրել է ԿԳՄՍ նախարարությունը և Պաշտպանության նախարարությունը |
| 8 | սանիտարական պատգարակ | երկարությունը 2200 մմ լայնությունը 560 մմ | ձեռք է բերվել ԱԻՆ -ից |
| 9 | քաղաքացիական հակագազ | ГП-5<br>1.2.3.4 չափերի | դեռևս խորհրդային ժամանակներից |

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԶՊ ԱՌԱՐԿԱՅԻ ԿԱԲԻՆԵՏԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ

## ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| կաբինետը վերանորոգված է | դպրոցը չունի սեփական հրաձգարան և օգտվում է Բալահովտի խաղաղապահ զորամասի հրաձգարանից |
| կաբինետը հագեցած է ուսումնադիդակտիկ պաստառներով | դպրոցի նկուղը, որը նաև թաքստոց է վերանորոգված չէ |
| | դպրոցի բակի անհարթ հարթակը որակյալ շարային անելու հնարավորություն չի տալիս: |

### ՆՊԱՏԱԿ

Ունենալ նյութատեխնիկական բազայով հագեցած, չափորոշչային պահանջներին համապատասխան ՆԶՊ կաբինետ, հրաձգարան, թաքստոց:

**Խնդիր**՝ ներգրավվել կրթության շահագրգիռ կողմերին, կազմակերպություններին, անհատներին, հրաձգարանի ստեղծման համար:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| N | ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ | ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1 | Վերանորոգել թաքստոցը, մի հատվածը դարձնել հրաձգարան | 2025-2026թթ. | Տնօրեն, համայնք, տնտեսվար, համապատասխան ոլորտի մասնագետներ | |
| 2 | Համալրել դպրոցի ՆԶՊ կաբինետը անհրաժեշտ ուսումնական նյութերով՝ պաստառներով, համազորային պաշտպանական լրակազմ համազգեստներով, հեռադիտակներով, հակագազերով, ռեսպերատոր շնչադիմակներով | 2023-2028թթ. | Տնօրեն, տնտեսվար, ՆԶՊ ուսուցիչ, Բալահովտի խաղաղապահ զորամաս | Հաշվի են առնվել ՆԶՊ ուսուցչի առաջարկները |

## ՌԻՍԿԵՐ

Դպրոցի նկուղում են գտնվում դեռևս 1971 թվականի՝ ջրամատակարարման, ջրահեռացնող խողովակներ, որոնք հաճախ են վթարվում և մաս-մաս փոխվում:

## ՄԵՂՄՈՂ

Կարգավորել սանտեխնիկական վիճակը՝ ըստ հաջորդող գործողությունների:

## Հաստատության բուժկետի նյութատեխնիկական ապահովվածությունը (բուժկետի աշխատանքները կազմակերպվում են ՀՀ ԱՆ 28 մարտի 2017թ. N12 հրամանի գլուխ 3-րդ, 23-26 կետերի պահանջներով)

| N | Անվանում | Տեխնիկական բնութագիր | Ձեռքբերում |
|---|---|---|---|
| 1 | սեղան բժշկական | հին պողպատյա | խորհրդային ժամանակներից |
| 2 | բժշկական պահարան | ապակե ցուցափեղկով | խորհրդային ժամանակներից |
| 3 | ջերմաչափ 2 հատ | էլեկտրոնային | ձեռք է բերվել դեղատնից |
| 4 | տախտակամած | 1450մմX900մմ դերմոնտինային երեսով | խորհրդային ժամանակներից |

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲՈՒԺԿԵՏԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| բուժկետը համավարակի ժամանակ օպերատիվ վերածվել է ախտահանման սենյակի | չկա հասակաչափ |
| գտնվում է 1-ին հարկում կենտրոնում | քիչ են ԱՆ նախարարի հաստատած ցանկով տրամադրված դեղերը |
| առկա է 1-ին բուժօգնության համալիր արկղ (շարժական)՝ Հայկական Կարմի Խաչի կողմից տրամադրված | |

## ՆՊԱՏԱԿ

Բուժկետը՝ որպես առողջության պահպանման առաջնային հատված, դարձնել առավել արդիական

## ԽՆԴԻՐ

Համալրել ԱՆ հրամանի պահանջներին համապատասխան՝ ամբողջական:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| N | ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ | ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1 | Համագործակցել համայնքի բուժամբուլատորիայի հետ | 2023-2028թթ. | տնօրեն, բուժքույր, տնտեսվար | |
| 2 | Հետևողական լինել և համալրել բուժկետը ԱՆ 28-ը մարտի 2017 N12 հրամանի հավելված 2-ի դեղերի ցանկով | 2023-2028թթ. | տնօրեն, բուժքույր, տնտեսվար | |

## Հաստատության ճաշարանի նյութատեխնիկական ապահովվածությունը

(Կահավորվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրի տրամադրած միջոցներով և հաստատության միջոցներով)

| N | Անվանում | Տեխնիկական բնութագիր | Ձեռքբերում |
|---|---|---|---|
| 1 | էլեկտրական վառարան | 4 այրիչ ջեռոցով | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |
| 2 | էլեկտրական վառարան | 380վ, 4 այրիչ ջեռոցով | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |
| 3 | էլեկտրական վառարան՝ կոնվեկցիայով | Կոնվեկցիոն | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |
| 4 | սեղան չժանգոտող | 1200-1600մմ | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |
| 5 | խմորախառնիչ պտուտակային | պողպատյա | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |
| 6 | չժանգոտվող պողպատից դարակ | 1200-500մմ | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |
| 7 | չժանգոտվող պողպատից երկտեղանոց լվացարան | 1200-500մմ | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |
| 8 | սննդի մեկդռնանի սառնարան | 300-320լ | ձեռք է բերվել կենցաղային տեխնիկայի խանութից |
| 9 | կենցաղային օգտագործման սառնարան 2 հատ | 300-320լ | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |
| 10 | սառցարան | 200լ | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |
| 11 | էլեկտրական կշեռք | հզորությունը 1.01կվ, կշռելու առավելագույն քաշը 5 կգ | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |

| | | | |
|---|---|---|---|
| 12 | հարթակով կշեռք | 1.01 կվ. կշռելու թույլատրելի առավելագույն քաշը 150կգ | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |
| 13 | սեղաններ | երկարությունը 180, լայնություն 90 | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |
| 14 | մանկական նստարաններ | երկարությունը 180,<br>40 սմ բարձր գետնից | կահույքի խանութից |
| 15 | խոհանոցի կահույք | պլաստիկատ | կահույքի խանութից |
| 16 | ջրատաքացման կաթսա | Ariston 50լ | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |
| 17 | անհրաժեշտ այլ խոհանոցային պարագաներ | | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր |

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՃԱՇԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ

## ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| 1-4-րդ դասարանցիները ստանում են կայուն առողջ դպրոցական սնունդ | Դպրոցը չունի ջրահեռացման համակարգ, որը անհապաղ լուծում է պահանջում |
| Ճաշարանը ունի անհրաժեշտ նյութատեխնիկական բազա՝ պատշաճ մակարդակով  կազմակերպելու աշակերտների սնունդը | |
| Սանիտարահիգիենիկ  պայմանների մշտադիտարկման բարձր մակարդակ՝ (սառուցիչ, խոտանման, ախտահանման, պահեստի մատյաններ և այլն) | |

| | |
|---|---|
| Երեխաների համարյա լիակատար մասնակցություն | |
| Համագործակցություն ծնողական խորհրդի հետ | |

## ՆՊԱՏԱԿ

Համագործակցել համայնքի հետ կոյուղաջրերի հեռացման, կարգավորման համակարգերը վերանորոգելու գործում:

## ՌԻՍԿԵՐ

Կոյուղացման խնդիրը Բալահովիտ գյուղի խնդիրն է , որի մի օղակն էլ դպրոցն է:

## ՄԵՂՄՈՂ

Համայնքապետարանը ծրագրում է կոյուղավորել գյուղը

## Հաստատության նախակրթարանի նյութատեխնիկական ապահովվածությունը

| N | Անվանում | Տեխնիկական բնութագիր | Ձեռքբերում |
|---|---|---|---|
| 1 | մանկական զգեստապահարան | գունավոր | կահույքի խանութից |
| 2 | լվացարան | | |
| 3 | կլոր սեղաններ | գունավոր | կահույքի խանութից |
| 4 | աթոռակներ | գունավոր | կահույքի խանութից |
| 5 | գրասեղան | գունավոր | կահույքի խանութից |
| 6 | գրատախտակ | մեծ և փոքր | |
| 7 | ցուցապահարան (զարգացնող միջավայրի համար) | գունավոր | կահույքի խանութից |
| 8 | խաղալիքներ | | |
| 9 | խաղալիքների պահարան | ցածր, գունավոր | |
| 10 | գորգեր | նախշազարդ | |

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ

## ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Նախակրթարանն ունի առանձին մուտք | Ունի վերանորոգման կարիք |
| Համայքնի օգնությամբ (միջին խմբի ֆինանսավորում) | Ունի գույքի նորացման կարիք |

## ՆՊԱՏԱԿ

Ունենալ ժամանակակից լուծումներով ուսանելի դիդակտիկայով նախակրթարան :

## ՌԻՍԿԵՐ

Ֆինանսական միջոցների անբավարարություն

## ՄԵՂՄՈՂ

Գտնել հովանավորներ, դիմել բարեգործական հիմնադրամների

# ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱ ԵՎ ՔԻՄԻԱ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

| N | Անվանում | Տեխնիկական բնութագիր | Ձեռքբերում |
|---|---|---|---|
| 1 | կշեռք ծգող զսպանակ | նոր | |
| 2 | վակումային պոմպի դասարանական հավաքածու | նոր | |
| 3 | հաղորդակից անոթներ | տարբեր ձևի | |
| 4 | պաստառներ | հին | |
| 5 | կշեռք ծգող զսպանակ | հին | |
| 6 | զսպանակներ | հին | |
| 7 | փոքր լամպի հիմք | հին | |
| 8 | էլեկտրական շղթա | ձեռքով պատրաստված | |
| 9 | վոլտմետր | 9վ մարտկոցով | |
| 10 | լծակային կշեռք | հին վերանորոգված | |
| 11 | բարոմետր | չափման միջանցք 760-1050 | |
| 12 | լաբորատոր շտատիվ և սեղմակներ | սեղմակներից որոշները վնասված | |

| | | | |
|---|---|---|---|
| 13 | գոգավոր ուռուցիկ զուգահեռ հարթ կամ զուգահեռ ոսպնյակներ | հին, գունաթափված | |
| 14 | այրման և բոցով այրման 10-15մմ գդալներ | հին | |
| 15 | փորձանոթի բռնիչ | սահող մետաղյա ձողով հին | |
| 16 | փորձանոթի խողանակ | հին վնասված | |
| 17 | ապակյա խողովակ | 25սմ խունացած | |
| 18 | ԴՆԹ մոլեկուլային մոդելների հավաքածու | լրակազմ նոր | բարերար |
| 19 | զգայական օրգանների մոդելներ/աչք, ականջ/ | նոր | բարերար |
| 20 | մարդու կմախքի մոդել | նոր, լրակազմ | բարերար |
| 21 | բույսերի համար հերբարիումներ | որոշ մասը վնասված | |
| 22 | միջատների հավաքածու | վնասված | |
| 23 | կենդանի օրգան համակարգերի մոդելներ | հիմնականում տաքսոնոմիկ խմբերից | |
| 24 | ծածկապակիներ | վնասված | |
| 25 | սկուտեղ ուղղանկյուն | հին | |
| 26 | խոշորացույց | բռնակը վնասված | |

# ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱ ԵՎ ՔԻՄԻԱ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ

# ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Կենսաբանություն, ֆիզիկա և քիմիա առարկաների մասնագետները իրենց գործի նվիրյալները լինելով բոլոր փորձերը հասանելի են դարձնում աշակերտներին՝ վիրտուալ տեսափորձերի, իրենց ձեռքով պատրաստած նյութերի և ձեռքի տակ ունեցած նյութերի միջոցով | Բացարձակապես անմխիթար վիճակում գտնվող նյութատեխնիկական բազա<br>Հին նյութեր, որոնց պահպանման ժամկետը առկա չէ |
| | Վնասված պիտակներ, որոնք պետք է պարունակեին տեղեկատվություն ժամկետների մասին,քիմիայի լաբորատոր սենյակ, որտեղ հավաքված են քիմիա, կենսաբանություն առարկաների նյութերը |
| | Հին, մի քանի անգամ վերանորոգված պաստառներ, ուսումնադիդակտիկ նյութեր |

## ՆՊԱՏԱԿ

Այս տխուր պատկերը առաջնային նպատակ է դարձնում ունենալ ԱՆ 2022թ. օգոստոսի 16-ի N21-Լ հրամանի պահանջներից բխող կենսաբանության, քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներ:

## ԽՆԴԻՐՆԵՐ

Օր առաջ մասնագետների օգնությամբ դուրս գրել հին, ժամկետնանց նյութերն ու սարքավորումները:

Ներգրավել կրթության բոլոր շահառու խմբերին լաբորատորիաների ստեղծման նպատակով

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Միջոցառումներ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ | ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|---|
| Հրավիրել մասնագետների, խորհրդակցել և նրանց օգնությամբ նորացնել լաբորատոր նյութերը | 2023թ. հոկտեմբեր | տնօրեն, տնտեսվար, ոլորտի մասնագետներ, ուսուցիչներ | |
| Սկսել քիմիայի լաբորատորիայի վերանորոգման և կահավորման աշխատանքները | 2024թ. | տնօրեն, տնտեսվար, ու այլ մասնագետներ | |
| Քիմիայի, կենսաբանության կաբինետը համալրել էլեկտրոնային գրատախտակներով, որոնք հնարավորություն կտան տեսափորձեր դիտելու | 2025թ. | Տնօրեն, տնտեսվար, | |

ՌԻՍԿԵՐ

**Անբավարար ֆինանսական միջոցներ**

ՄԵՂՄՈՂ՝

**Խնայողություններ, բարերարներ, հիմնադրամներ**

# ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

| N | Անվանում | Տեխնիկական բնութագիր | Ձեռքբերում |
|---|---|---|---|
| 1 | բարձրացատկի կանգնակ | հին | |
| 2 | ներքնակներ | 1մ-2 մ | |
| 3 | կամրջակ | փայտյա հիմքով. Զսպանակներով, նոր | ԿԳՄՍ |
| 4 | շվեդական պատ | փայտյա կիսակոր աստիճաններով, 2.5մ բարձրությամբ, 85սմ լայնությամբ, 2 հատ նոր, 2 հատ հին | նորերը՝ ԿԳՄՍ |
| 5 | մարմնամարզական այծիկ | մետաղական ոտնակներով, կաշեպատ | խորհրդային շրջանի |
| 6 | վոլեբոլի կանգնակ | մետաղական հիմքով, բարձրացվող և իջեցվող համակարգով, ճոպաններով, ցանցը՝ ամրացվող հատվածներով | նոր, ձեռք է բերվել սպորտային խանութից |
| 7 | բասկետբոլի վահանակ | մարզումային և մրցումային չափորոշիչներին համապատասխան | խորհրդային շրջանի |
| 8 | մարմնամարզական նստարան | փայտյա հիմքով, երկարությունը՝3մ, լայնքը՝21սմ, վերանորոգված | խորհրդային շրջանի |
| 9 | պտտաձող | մետաղական հիմքով, գետնին ամրացնելու հարմարանքով | նոր՝ ԿԳՄՍ |
| 10 | մագլցման պարան | 4.5 մետր երկարությամբ, վերին մասում առաստաղին ամրացվող, վնասված | խորհրդային շրջանի |

# ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| ՈՒԺԵՂ | ԹՈՒՅԼ |
|---|---|
| Մարզադահլիճը մասնակի  վերանորոգված է | Դահլիճի կտուրը վնասված է |
| Հատակը փայտյա է, էկոլոգիապես մաքուր | Դահլիճի պատուհանների, պաշտպանիչ ցանցերը վնասված են, մագլցման պարանները գրեթե պիտանի չեն |
| Ունենք նոր ստացած մարզագույք | |

## ՆՊԱՏԱԿ

Ունենալ մարզագույքով առավել հագեցած ժամանակակից մարզումային չափանիշներին համապատասխան մարզադահլիճ

## ԽՆԴԻՐ՝

Մարզադահլիճի կտուրի վերանորոգում

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| **Միջոցառումներ** | **ԺԱՄԿԵՏՆԵՐ** | **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ** | **ՆՇՈՒՄՆԵՐ** |
|---|---|---|---|
| Ձեռք բերել պատուհանների պաշտպանիչ ցանցեր | 2024թ. | Տնօրեն, տնտեսվար, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ | |
| Վերանորոգել կտուրը | 2024-2026թթ. | Տնօրեն, տնտեսվար | |
| Ձեռք բերել մագլցման պարաններ | 2023թ. | Տնօրեն, տնտեսվար, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ | |

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ <<ՇԱԽՄԱՏ>> ԱՌԱՐԿԱՅԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

| N | Անվանում | Տեխնիկական բնութագիր | Ձեռքբերում |
|---|---|---|---|
| 1 | Շախմատի ցուցադրական խաղատախտակ՝ խաղաքարերով | Պոլիէթիլենե, մագնիսական | |
| 2 | Շախմատի խաղատախտակներ /սեղանի/՝ խաղաքարերով | 20 հատ պոլիէթիլենե | |
| 3 | Շախմատային խնդիրների պաստառներ | 10 հատ | |

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ <<ՇԱԽՄԱՏ>> ԱՌԱՐԿԱՅԻ

## ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Կաբինետը վերանորոգված է, կահավորված | Կաբինետը չունի ժամանակակից շախմատային գրատախտակ |

**ՆՊԱՏԱԿ**

Շարունակական համալրել, նորացնել շախմատի դասասենյակը

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| **Միջոցառումներ** | **ԺԱՄԿԵՏՆԵՐ** | **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ** | **ՆՇՈՒՄՆԵՐ** |
|---|---|---|---|
| Ձեռք բերել ժամանակակից շախմյատային ցուցատախտակ | 2024թ.մինչև մայիս | Տնօրեն, տնտեսվար, շախմատի ուսուցիչներ | Համագործակցում ենք Աբովյանի շախմատի դպրոցի հետ |

# ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ

## ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

**(ամփոփ վերլուծություն)**

| | |
|---|---|
| • Դպրոցը շահեկանորեն տարբերվում է շենքային պայմաններով և բարեկարգությամբ<br>• Դպրոցում տեղադրված են տեսախցիկներ<br>• Անվճար ինտերնետային կապ<br>• Դպրոցն ունի արևային կայաններ<br>• Լեդ լուսավորում գլխավոր միջանցքում<br>• Վերանորոգված միջոցառումների դահլիճ<br>• Բարեկարգ սպորտային դահլիճ<br>• Վերանորոգված գրադարան և ընթերցասրահ<br>• Վերանորոգված և կահավորված ուսուցչանոց<br>• Վերանորոգված մուտք՝ թեքահարթակով և երկու մասնաշենքները իրար միացնող վերանորոգված նախասրահ<br>• Վերանորոգված և տեխնիկապես հագեցած <<Արմաթ>> ճարտարագիտական աշխատանոց<br>• Լոկալ ջեռուցման համակարգ<br>• Բարեկարգված բակ նոր ցանկապատով<br>• Ինտենսիվ հատապտղային այգի՝ հակակարկտային ցանցերով, ջրման կաթիլային համարգով<br>• Ինտենսիվ պտղատու այգի<br>• Կալիֆորնիական որդերի աճեցման պլատֆորմ, այգու պարարտացման նպատակով<br>• ջրհորդաններից ջուր հավաքելու համակարգ<br>• Սպորտային հրապարակ | • Դպրոցը և համայնքը չունի ջրահեռացման համակարգ, կոյուղացում<br>• Քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության լաբորատոր սարքավորումները և դիդակտիկ նյութերը տեղակայված են քիմիայի լաբորատորիայում, բոլորը հին են, ոչ լրակազմ<br>• Դպրոցի դասասենյակները ունեն վերանորոգման, նորացման կարիք<br>• Կարողունակությունների վրա հիմնված ուսումնական միջավայրի թերություններ՝ մասնավորապես՝<br>- Դպրոցը հագեցած չէ ՏՀՏ միջոցներով՝ ինտերակտիվ էլեկտրոնային գրատախտակներով, համակարգիչներով<br>- Գրադարանը համալրված չէ հայ, անգլերեն, ռուսերեն և նոր հրատարակված գեղարվեստական և մեթոդական գրականությամբ, բառարաններով, հանրագիտարաններով<br>• Միջին դպրոցում գտնվող դասարանների գույքի մաշվածություն<br>• Նոր սարքավորումների /տպիչ, սկաներ և այլն/ սակավություն<br>• Հրշեջ ծորակների բացակայություն |

## ՆՊԱՏԱԿ

Նոր պահանջներին և փոփոխություններին համընթաց դպրոցի նյութատեխնիկական բազայի ստեղծում՝ բաց՝ նորարարությունների և փոփոխությունների համար: Ուսումնական միջավայրի համապատասխանեցում սովորողների կարիքներին ու հասարակության պահանջներին:

## ԽՆԴԻՐՆԵՐ

- Շարունակել ֆիզիկական միջավայրի բարելավմանն ուղղված ենթակառուցվածքային ծրագրերի իրականացումը՝ շեշտադրելով նոր չափորոշչային պահանջներն ու համայնքի կարինքերը:
- Ներդնել ժամանակակից ուղղվածությանը համընթաց նոր կրթական տեխնոլոգիաներ և ենթակառուցվածքներ

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Միջոցառումներ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ | ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|---|
| Ախտորոշիչ դիտարկման հանձնաժողով հրավիրել՝ ուսումնասիրելու հաստատության ջրահեռացման կոյուղագծերի վիճակի գնահատման համար | 2023թ. հոկտեմբեր ամիս | Տնօրեն, համայնքի հատուկ մասնագետներ, տնտեսվար | Հարակից բնակելի տների բնակիչներին ընդգրկել գործընթացում |

| | | | |
|---|---|---|---|
| Ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակներ | 2024-2026 աստիճանաբար | Տնօրեն, համայնք | Լրացուցիչ միջոցների առկայության դեպքում |
| Բարեկարգել բակի սպորտային հրապարակը, կատարել գծանշումներ | 2026թ. | Տնօրեն, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ | |
| Սանհանգույցներում կատարել հարմարեցումներ ԿԱՊԿՈՒ աշակերտների համար | 2025թ. | Տնօրեն, տնտեսվար, կառավարման խորհուրդ | Խորհրդատվության նպատակով խորհրդակցել ՏՄԱԿ-ի հետ |

**ՌԻՍԿԵՐ**

- 1.Հովանավորներ գտնելու գրեթե անհնարինություն
- 2. Լրացուցիչ ֆինանսավորվող ծրագրեր կազմելու, ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու մոտիվացիայի պակաս անձնակազմի կողմից
- 3. Կոյուղագծերի վնասված համակարգը ողջ գյուղի տարածքում

**ՄԵՂՄՈՂ՝**

Հայտնի շրջանավարտների ներգրավում, անձնակազմի, կրթության շահագրգիռ կողմերի ներգրավում, դրամաշնորհային ծրագրեր, համայնքի բնակիչները նույնպես մտահոգ են կոյուղացման խնդիրներով:

## 1.3 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

**Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման խորհուրդ, որը բաղկացած է 9 անդամից: Հաստատության տնօրենը կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով**

| **Անուն, ազգանուն, հայրանուն** | **Աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը** | **Կրթությունը** |
|---|---|---|
| Անդրանիկ Պետրոսյան | Բալահովտի համայնքապետարան | բարձրագույն |
| Գոռ Հակոբյան | Կոտայք ՋՕԸ –ի տնօրեն | բարձրագույն |
| Արմինե Պետրոսյան | Աբովյանի Բազմագործառութային քոլեջի փոխտնօրեն | բարձրագույն |
| Միեր Եղիազարյան | Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ | բարձրագույն |
| Կամելիա Մանուկյան | Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժին | բարձրագույն |
| Աիարոն  Ազաբյան | <<Բալահովտի Ի. Վիրաբյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ, ուսուցիչ | բարձրագույն |
| Սոֆյա Քերոբյան | <<Բալահովտի Ի. Վիրաբյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ, ուսուցիչ | բարձրագույն |
| Հերմինե Ասատրյան | չի աշխատում | բարձրագույն |
| Էլլադա Դանիելյան | չի աշխատում | միջնակարգ |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Մասնակցային կառավարման հստակ հնարավորություն<br>• Տնօրենի ներկայացմամբ լսում և հավանություն է տալիս զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությանը<br>• Նիստերը արդյունավետ են, առաջարկներով ու կարծիքներով: Հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, վարքագծի կանոնները<br>• Հաստատում է նախարարի 2013թ. ապրիլի 15-ի N 396-Ն հրամանով հաստատված ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը և դրա փոփոխությունները<br>• Քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության այդ թվում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների  մասին հաշվետվություններ<br>• Քննարկում է ներքին, արտաքին գնահատման արդյունքները<br>• Այլ կառուցվածքային և պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի օրինակելի վարում, հաստատության տնօրենը աջակցում է հաստատության կառավարման մարմնի աշխատանքներին | • Խորհրդակցական մարմնի որոշ անդամների կողմից թերի կատարում իրենց գործառույթների թերի, ոչ լիարժեք գիտակցում<br>• Միայն հաստատության տնօրենի կողմից որոշ աշխատանքների կոորդինացիա, փաստաթղթերի վարում:<br>• Կառավարման խորհդի կողմից ինքնուրույն նախաձեռնությունների սակավություն<br>• Անդամների կողմից ներքին իրավական ակտերի թույլ իմացություն<br>• Կառավարման խորհրդի էքսպերտային ցածր մակարդակ |

## ՆՊԱՏԱԿՆԵՐ

1. Գնահատել առկա կառավարման մոդելը և դարձնել այն էլ ավելի ակտիվ, համագործակցային:

## ԽՆԴԻՐՆԵՐ

1.Զարգացնել և խրախուսել հաճախակի բաց քննարկումները՝ հաստատության  տնօրենի և կառավարման խորհրդի միջև արդյունավետ համագործակցության նպատակով

2. Երկխոսության այլ հարթակներ ստեղծել խորհրդին առավել մոտեցնելու հաստատության խնդիրներին, որը հնարավորություն կտա խորհրդին աջակցելու դրանք

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ |
|---|---|---|
| • Մշակել յուրաքանչյուր գործողության համար վերահսկողության մեխանիզմներ, որը կհաստատի խորհուրդը: | Յուրաքանչյուր ուստարվա սկիզբ | Տնօրեն, կառավարման խորհուրդ |
| • Յուրաքանչյուր գործողության համար սահմանված հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցը հաստատվելու են խորհրդի կողմից | Յուրաքանչյուր ուստարվա սկիզբ | Տնօրեն, կառավարման խորհուրդ |
| • Ուսումնասիրել արտասահմանյան դպրոցների կառավարման մոդելների | 2023-2028թթ. | Հաստատության տնօրեն, կառավարման խորհրդի նախագահ |

| | | |
|---|---|---|
| աշխատանքի արդյունավետ կողմերը, տեղայնացնել լավագույն փորձը | | |
| • Կազմակերպել սեմինարներ՝ ներքին իրավական ակտերի, կրթությանը վերաբերող այլ օրենքների պարզաբանմամբ, իրազեկել խորհրդի անդամների իրավունքներն ու պարտականությունները | Յուրաքանչյուր ուստարվա առաջին նիստին | Հաստատության տնօրեն, կառավարման խորհրդի նախագահ, խորհրդի անդամներ |
| • Հրավիրել դպրոցում իրականացվող միջոցառումներին: Ինչպես նաև մասնակից դարձնել դպրոցում առկա խնդիրների լուծմանը (անկախ նիստերի ժամանակացույցից) | 2023-2028թթ. | Հաստատության տնօրեն, կառավարման խորհուրդ |

**ՌԻՍԿԵՐ**

- Խորհրդի դերի նվազումը
- Խորհրդի որոշ անդամների իներտ, ձեռնպահ վերաբերմունքը քննարկվող հարցերի և դրանց լուծումների վերաբերյալ

**ՄԵՂՄՈՂ՝**

- Խորհրդի անդամների հետ անհատական աշխատանք
- Խորհրդի անդամների միջև բազմակարծության մթնոլորտի ձևավորում՝ քննարկման դնելով յուրաքանչյուրի կարծի

## 1.4 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

**Հաստատության կառավարումը իրականացվում է Կանոնադրության համապատասխան**



## ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՏ



| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Հաստատությունում ուսումնական գործընթացն իրականացվում է հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների, մանկավարժների, սովորողների և ծնողների փոխադարձ վստահության պայմաններում<br>• Հաստատության կառավարման գործընթացներում բոլոր շահակից խմբերին պարբերաբար հատկացվում են անհրաժեշտ դիտարկումներ, հաշվետվություններ, առաջարկներ՝ սահմանված ժամանակամիջոցներում<br>• Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմիններում քննարկվում են հանրակրթության ոլորտին վերաբերվող օրենսդրական առաջարկներն ու նախագծերը, առկայության դեպքում ներկայացվում են առաջարկներ ու դիտարկումներ դրանց վերաբերյալ<br>**Հիմնադիր, լիազոր մարմին՝**<br>• Սահուն թափանցիկություն փաստաթղթաշրջանառություն<br>• Կառուցվածքային և պարտադիր փաստաթղթաշրջանառության օրինակելի | • Ինքնուրույն նախաձեռնությունների սակավություն<br>• Արտաքին միջամտություններ ներքին կառավարման գործընթացներին<br>• Լիազորությունների սահմանափակում<br>• Հաճախ կրթական կազմակերպությունների միջոցառումների դետալային կազմակերպումը մնում է միայն դպրոցի վրա |

| | |
|---|---|
| վարում<br>• Ներքին իրավական ակտերի հստակ կանոնակարգում և հետևում<br>• Հաստատության զարգացման նպատակով հաշվի է առնվում համայնքի կարիքներն ու ներուժը<br>• Առաջարկվում են նոր ծրագրեր<br>• Առկա է արդյունավետ համագործակցություն և կապ ոլորտի կառավարման մարմինների, ուսուցչական կազմակերպությունների, կրթության շահառու կազմակերպությունների հետ<br>-<<Կրթություն և համերաշխություն>> արիմիություն<br>-<<Մասնակցային դպրոց>> հիմնադրամ<br>-<<Պատանեկան նվաճումներ>><br>-<<Պարադիգմա>><br>-<<ԿԶՆԱԿ>><br>-<<Իթվինինգ>><br>-<<Դասավանդիր Հայաստան>><br>-<<Իմ դպրոց>><br>-<<ՄԱԿ-ի պարենի>>համաշխարհային ծրագիր<br>-Ատեստավորող կազմակերպություններ և այլն | |

## ՆՊԱՏԱԿՆԵՐ

Կառավարման արդյունավետության բարձացում: Համագործակցային դպրոցի կայացում:

## ԽՆԴԻՐՆԵՐ

1. Գնահատել առկա կառավարման մոդելը և դարձնել էլ ավելի սերտ համագործակցված:
2. Արտակարգ իրավիճակներում, համակագործակցված օպերատիվ աշխատանք:
3. Առավել արդյունավետ դարձնել տնօրենի համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ | ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|---|
| Մշտապես ակտիվ մասնակցել կառավարման մարմինների համապետական միջոցառումներին՝ (օլիմպիադաներ, ռազմամարզական խաղեր, շաբաթօրյակներ, սպորտլանդիաներ, սպարտակիադաներ, մշակութային հոբելյանական միջոցառումներ) | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, աշակերտներ | Մասնակցել ենք՝ <<ՀՀ Վարչապետի գավաթ>> դպրոցականների թիմային խճուղավազքին, մարզային ռազմամարզական խաղերին,մասնակցել ենք <<Պատանի հրշեջ փրկարարների>> մարզային առաջնությանը, <<Քո արվեստը դպրոցում>> հանրապետական մշակութային ծրագրին, համապետական շաբաթօրյակներին, հուշարձանների պահպանության միջոցառումներին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | և այլն: |
| Առավելապես կանոնակարգված ներքին իրավական ակտերի և հիմնարար փաստաթղթերի բազա ստեղծել, որը հասանելի կլինի կառավարման մարմիններին | 2023-2028թթ. | Տնօրեն, գործավար | |

**ՌԻՍԿԵՐ**

- Արտակարգ իրավիճակներ
- Քաղաքական և տնտեսական արտաքին և ներքին փոփոխություններ

**ՄԵՂՄՈՂ՝**

Անկախ հանգամանքներից դպրոցի և կառավարման մարմինների համագործակցությունը պարտադիր է և շարունակական և անպայման միջոցներ կգտնվեն դրանք կազմակերպելու (օրինակ՝ հեռավար):

# ԴՊՐՈՑ-ՀԱՄԱՅՆՔ ԿԱՊԸ

| ՈւԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Դպրոցն ակտիվորեն համագործակցում է համայնքի հետ, մասնակցում մշակութային, սպորտային միջոցառումներին, (Գիրք նվիրելու օր, Անկախության օր ընկերական խաղեր, շաբաթօրյակներ, հուշարձանների պահպանություն և այլն):<br>• Համագործակցում է այժմ արդեն Աբովյան համայնքապետարանի հետ՝ (համայքների խոշորացման հետևանքով Բալահովիտ գյուղը մտնում է Աբովյան խոշորացված համայնքի մեջ)<br>• Դպրոցը համագործակցում է համայնքապետարանի հետ, հատկապես հանրակրթությունից դուրս մնացած և անապահով, ծնողազուրկ կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված աշակերտների հարցերով: (Վերը նշված աշակերտների խնդիրները համատեղ լուծում են ստացել):<br>• Համայնքի մշակույթի տան և գրադարանի հետ սերտ է համագործակցությունը (պարի, նկարչության, բրուտագործության, կարատեի խմբակներ)<br>• Համայնքի կողմից (նախկինում Բալահովիտ, այժմ Աբովյան) հաջողությամբ ֆինանսավորում է նախակրթարանի միջին խմբի գործունեությունը:<br>• Համագործակցված աշխատանքներ են տարվում համայնքի հետ գյուղի ճարտարապետական հուշարձանների պահպանման, ժամանակ առ ժամանակ մաքրման ուղղությամբ | • Վերահսկողության պակաս դպրոց տանող ճանապարհի անվտանգությանն ուղղված<br>• Համայնքային միջոցառումների թվի սակավություն<br>• Հենաշարժական խնդիրներ ունեցող աշակերտների դժվար տեղաշարժը կիսաքանդ ասֆալտի վրայով<br>• Համայնքի ազգային փոքրամասնությունների (եզդի, քուրդ, ասորի) կարիքները միայն դպրոցն է չափորոշչային մակարդակով գնահատվում, համայնքում անտեսվում են հաճախ նրանց սոցիալական կարիքները, սովորույթները, ավանդույթները ու դրանց ուղղված միջոցառումները (տոներ, հիշատակի օրեր և այլն): |

| | |
|---|---|
| • Համայնքը աջակցում է դպրոցի անապահով աշակերտներին և պարբերաբար թարմացնում է նման աշակերտների ցանկը: | |

**ՆՊԱՏԱԿ**

1.Սերտ, կայուն, համակարգված գործունեության հարթակի վրա դնել դպրոց-համայնք կապը:

**ԽՆԴԻՐՆԵՐ՝**

1.Կոնկրետ և հստակ սահմանել համագործակցության կարիքները

2.Խնդիրները և դրանց լուծումները ներկայացնելով համայնքապետարանի պատկան մարմիններին: Համայնքի առավելագույն ներգրավածության ապահովում դպրոցի և ուսումնադաստիարակչական կյանքում

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ |
|---|---|---|
| • Հրավերներ, հանդիպումներ, մասնագետների, պատկան մարմինների հետ կոյուղագծերի և հոսանքալարերի վտանգավորության բացառման համար | 2023թ. | Տնօրեն, համայնքի ղեկավար, համայնքապետարան, համապատասխան բաժիններ, ՀԷՑ |
| • Դիմել համայնքի ղեկավարին կարգավորելու Լ. Ավետիսյան 7 նրբանցի երթևեկությանը առավոտյան 8:30-9:00 ժամանակահատվածում | 2023թ. սեպտեմբեր | Տնօրեն, համայնքապետարան |

| | | |
|---|---|---|
| • Խնդրել համայնքապետարանին ասֆալտապատել դպրոցի դիմացի 100մետրանոց ճանապարհը | 2023-2024թթ. | Լիազոր մարմին, համայնքապետարան, տնօրեն |
| • Հանդիպել համայնքի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ, հաղորդակից դառնալ նրանց կարիքներին, խնդիրներին և դպրոցում նրանց երեխաների կրթությունը կազմակերպելիս հաշվի առնել այդ առանձնահատկությունները | 2023-2028թթ. | Տնօրեն,ծնողական խորհուրդ, համայնքապետարանի աշխատողներ, հոգեբան, դասղեկներ |
| • Համայնքին ներգրավել (շրջանավարտներ, ձեռներեցներ, բարեգործներ) դպրոցի նյութատեխնիկական բազան հարստացնելու գործում | 2023-2028թթ. | Դպրոց-համայնք |
| • Մասնակցել և համայնքին մասնակից դարձնել բոլոր կազմակերպված միջոցառումներին(շաբաթօրյակ, հիշատակի, տոնական, սպորտային և այլն) | 2023-2028թթ. | Դպրոց-համայնք |
| • նախագծային և այլ աշխատանքների ժամանակ իրականացնել համայնքային կարիքների ուսումնասիրություն և վերլուծություն: Դրանք հաշվի են առնվում աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ: | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ առարկաների մասնագետներ |

## ՌԻՍԿԵՐ

- Վնասված են գյուղի բարձր լարման տակ, սարդոստայնի վերածված հոսանքալարերը և պարբերաբար հոսանքազրկումները խնդիր են դառնում դպրոցում կրթական գործընթացը բնականոն կազմակերպելու համար:
- Ապօրինի շինությունների հետևանքով վտանգված է դպրոց տանող ճանապարհը:
- Առկա է կոյուղաջրերի և խմելու ջրի խառնման վտանգը, քանի որ մաշվածությունը բերել է մի քանի վթարների:

## ՄԵՂՄՈՂ՝

Բաց և հետևողական աշխատանք համայնքապետարանի հետ

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից

### Ծնողական խորհուրդը բաղկացած է 19 անդամներից

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| -Ակտիվ ծնողական համայնք՝ ծնողական խորհուրդ<br>-մասնակցում են ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավմանը<br>-լսում տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի, հեռանկարների մասին, անում է առաջարկներ<br>-աջակցում է համադպրոցական դասարանական միջոցառումների, էքսկուրսիաների, արտադպրոցական միջոցառումների կազմակերպմանը:<br>-դպրոցը համագործացում է ընտանիքների հետ, մասնակցում խնդիրների բացահայտմանը և լուծմանը:<br>-Ծնողները դիմում են հաստատությանը իրենց երեխայի կարիքները գնահատելու և մանկավարժահոգեբանական աջակցություն ցուցաբերելու համար: | -ծնողական համայնքում առկա անհաղորդ և չհամագործակցող ծնողներ:<br>Հաստատությունը չի կազմակերպում երկարօրյա ուսուցում |

## ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Բարձրացնել ծնողական համայնքի աջակցության ակտիվությունը՝ հատկապես ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Գերագույն նպատակ սահմանել ծնող-դպրոց կապի առավել ամրապնդումը, ուսման որակի բարելավմանն ուղղված ծրագրերը,. ծնողների կողմից որակյալ կրթության նկատմամբ պահանջարկի ձևավորումը:

-Նպաստել հասարակության մեջ ուսուցչի վարկանիշի բարձրացմանը

### ԽՆԴԻՐՆԵՐ

- Գնահատել ծնողական խորհրդի մասնակցությունը արտադասարանական-արտադպրոցական միջոցառումների կազմակերպման գործում՝ կանոնակարգված համակարգով աշխատելու և շոշափելի արդյունքի հասնելու համար:
- Աջակցել ծնողական խորհրդին՝ բարձացնելու դպրոցի կանոնանդրությամբ իրեն վերապահված իրավասությունները գործածության մեջ դնելու արդյունավետությունը:
- Սովորողի հետ ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակով կազմակերպել երկարօրյա ուսուցում:
- Համագործակցության ուղիների հստակ սահմանում
- Ծնողների աջակցությունը երկարօրյա ուսուցման կազմակերպմանը
- Ծնողների առավել  ներգրավածություն՝ որպես կրթական գործընթացի մասնակից

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ |
|---|---|---|
| -Շարունակել կիրառել համագործակցման ձևեր՝ որոնք ամրապնդում են դպրոց- ուսուցիչ-ընտանիք կապը (<<Բաց դռների օր>>, հարցումներ ծնողների շրջանում, <<Դասղեկի ժամը վարում  է ծնողը>>): | 2023-2028թթ. | Տնօրեն, անձնակազմ, ծնողներ, ՏՄԱԿ |
| -Համագործակցել նաև դպրոցի ծնողական խորհրդի հետ՝ գտնելու համար և՛ կրթական, և՛ սոցիալական աջակցող ծրագրեր: | 2023-2028թթ. | Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ |
| -Դպրոցի ծնողական խորհրդի անդամաններին մասնակից դարձնել դպրոցի կրթական ծրագրերին, բոլոր միջոցառումներն, մրցույթներին, ներքին գնահատման աշխատանքներին: | 2023-2028թթ. | Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ծնողական խորհուրդ |
| -Լսել անխտիր բոլորի կարծիքներն ու առաջարկները, դիտարկումներն, նաև դժգոհությունները: | 2023-2028թթ. | Տնօրեն, ծնողական խորհուրդ |
| -Միջոցներ գտնել ներգրավելու պասիվ, անտարբեր ծնողներին | 2023-2028թթ. | Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ, ծնողական խորհուրդ |
| Երկարօրյա խմբում ընդգրկել ցածր առաջադիմությամբ և ԿԱՊԿՈՒ | 2023թ. սեպտեմբերից | Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ծնողական խորհուրդ |

| | | |
|---|---|---|
| սովորողների | | |
| Ծնողի հետ աշխատանք տանել հատկապես երեխայի կարիքի գնահատման հարցերով և համակողմանի բացատրել դրա անհրաժեշտությունը, հաշվետու լինել, ներկայացնել վերջնարդյունքները | 2023-2028թթ. | Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ծնողական խորհուրդ, ՏՄԱԿ, հոգեբան |
| Կարիքի գնահատում անցած աշակերտների ծնողների հետ տանել առանձին սոցիալ-հոգեբանական աշխատանք | 2023-2028թթ. | Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, հոգեբան, ՏՄԱԿ |

# ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է , որը ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Ակտիվ, նախաձեռնող, պատրաստակամ աշակերտներ<br>• Արդեն ավանդական դարձած <<աշակերտական ինքնավարության օր>>՝ այդ օրը դպրոցի ողջ կառավարումը հանձնվում է աշակերտական խորհրդին:<br>• <<Իմ կյանքը համայնքում>> ԿԶՆԱԿ-ի ծրագրին աշակերտների փոխանակման ծրագիր, որը հնարավորություն է տալիս 2 շաբաթ սովորել այլ դպրոցում, համեմատել, համադրել բերել և փոխանցել առաջավոր փորձը (2 մասնակցություն)<br>• <<Ես մեդիագրագետ եմ>>, <<Ես եմ ռեժիսորը>>, <<Սանտա Ծառեր>> ԿԶՆԱԿ ծրագրերին ակտիվ մասնակցություն<br>• Հաստատությունը խթանում է աշակերտական բազմակարծությունը, ազատությունը, համերաշխությունը<br>• Շատ կարևոր է ներառական և մասնակցային | • Արտաքին կապերի ստեղծման փորձի պակաս<br>• Միջազգային ծրագրերի նախաձեռնման փորձի պակաս<br>• Թույլ մասնակցություն ուսումնական պրոցեսի կազմակերպման մեջ<br>• Կոմպետենցիաների կիրառման պակաս<br>• Սպորտային միջոցառումների քանակի պակաս<br>• Թույլ համագործակցություն ուսուցիչների հետ (բացի դասապրոցեսից) |

| | |
|---|---|
| արժեքային միջավայրի ստեղծման շուրջ շարունակական քայլերը: Արդեն ավանդական է դարձել աշակերտական խորհրդի կազմակերպած <<Օգնիր ինչով կարող ես>> բազմակողմ միջոցառումը:(Պաշտպանիչ ցանցերի պատրաստում, <<Ծանրոց զինվորին>>՝ ռաջին անհրաժեշտության պարագաների հավաքագրում զինվորների համար, օգնություն սոցանապահովներին)<br>• 11-րդ դասարանի աշակերտուհի Ռազմելա Ավետիսյանը ներառված է ԿԳՄՍ նախարարությանը կից աշակերտական խորհրդի կազմում<br>• Մասնագիտական կողմնորոշմանը միտված նախաձեռնություններ՝ դպրոց են հրավիրվում տարբեր մասնագետներ դարձած շրջանավարտները, որոնք կիսվում են իրենց փորձով, պատմում իրենց ընտրած մասնագիտության մասին և, որ ամենակարևորն է, բացատրում են սովորողներին, որ մասնագիտության ընտրության մեջ չկա գենդերային խտրականություն<br>• Ամենօրյա մասնակցություն դպրոցական այգու աշխատանքներին (1-12-րդ դասարանցիներ, աշակերտական խորհրդին կից <<Պատանի բնագետի>> ակումբ)<br>• Աշակերտական խորհրդի անմիջական մասնակցությամբ Իրաքի քաղաքացի աշակերտներ Ջասիմ, Ջանաթ, Մարիամ Ամիրահ, Ռամի Վեսամ | |

| | |
|---|---|
| Կադիեմները ինտեգրվեցին դպրոցի կրթական պրոցեսին (հենց աշակերտները նրանց սովորեցրին հաղորդակցվել հայերենով) | |

## ՆՊԱՏԱԿ

Աշակերտների՝ դպրոցի ուսումնական գործընթացներին և հասարակական կյանքին մասնակցության բարելավում: Հաստատությունում բազմակարծիք, ներառական, մասնակցային արժեքային միջավայրի բարելավում: Աշակերտական ինքնավարության կայացում, մասնագիտական կողմնորոշման ինստիտուտ

## ԽՆԴԻՐՆԵՐ

1. Բարձրացնել աշակերտական խորհրդի դերը, հզորացնել նրա կարողունակությունները: Հայրենասիրության պետականության ոգով դաստիարակել սերունդ՝ հանդուրժողական, նպատակասլաց, ինքնաճանաչ, հայրենաճանաչ, մեդիագրագետ:
2. Աշակերտներին մասնակից դարձնել դպրոցի կառավարմանը
3. Խթանել հետաքրքրությունը դասապրոցեսի նկատմամբ
4. Խթանել նորարարություններն ու ստեղծագործական միտքը
5. Խթանել հասարակական կյանքին ինտեգրվելու և հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունները

6. Խթանել աշակերտների մասնակցությունը արտադպրոցական կյանքին (արշավներ, պատմական վայրերի ուսումնասիրություններ)
7. Զարգացնել հիմնական կարողունակությունները
8. Խթանել սպորտային կյանքը դպրոցում

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ |
|---|---|---|
|Ականջալուր լինել սովորողների կարծքիներին, առաջարկներին: | 2023-2028թթ. | Տնօրեն, ՄԿԱ գծով փոխտնօրեն, աշակերտական խորհուրդ |
| Աշակերտների մեջ ձևավորել հայրենասիրությանը, առողջ ապրելակերպին, անվտանգ միջավայրին հանդուրժողականությանը, բարեվարքությանը ուղղված կայուն արժեհամակարգ՝ միջոցառումների, զրույց-բանավեճերի, ուսուցողական էքսկուրսիաների, քննարկումների, սեմինարների միջոցով: | 2023-2028թթ. | Տնօրեն, ՄԿԱ գծով փոխտնօրեն, աշակերտական խորհուրդ |
| Լրամշակել ներքին կարգապահական կանոնները, աշակերտի վարքագծի կանոնները՝ հստակեցնելով աշակերտների իրավունքների ու պարտականությունների շրջանակը: | 2023թ. սեպտեմբեր | Տնօրեն, ՄԿԱ գծով փոխտնօրեն, աշակերտական խորհուրդ |

| | | |
|---|---|---|
| Հարցումների միջոցով պարզել աշակերտների ինքնավարության բարձացման հիմնախնդիրները: | 2023-2028թթ. | Տնօրեն, հոգեբան, ՄԿԱ գծով փոխտնօրեն, աշակերտական խորհուրդ |
| Դպրոցի կարևոր նախաձեռնություններում ներգրավել աշակերտական խորհրդի անդամներին: | 2023-2028թթ. | Տնօրեն, ՄԿԱ գծով փոխտնօրեն, մանկավարժական համակազմ, համայնքապետարան |
| Վաղ հայտնաբերել լ հալածանքի, օտարման, բռնության, անգամ ամենաչնչին դեպք: | 2023-2028թթ. | Տնօրեն, ՄԿԱ գծով փոխտնօրեն, հոգեբան, սոցաշխատողներ |
| Շարունակել մասնագիտական կողմնորոշմանը ուղղված միջոցառումները, հանդիպումները, սեմինարներե, վեբինարները | 2023-2028թթ | Տնօրեն, ՄԿԱ գծով փոխտնօրեն, ԴԱԿ, նախկին շրջանավարտներ, սովորողներ |

## ՌԻՍԿԵՐ

-Հասարակական գործերի նկատմամբ հետաքրքրության պակաս

-Ժամանակակից երեխաների գերծանրաբեռնվածությունը դպրոցում և խիստ զբաղվածությունը կամ վտանգավոր անգործությունը ՝ դպրոցից դուրս:

-Հասարակության արատավոր երևույթների բացահայտում դպրոցական կյանքում՝ ագրեսիվ վարքագիծ, վնասակար սովորություններ, ընտանիքում՝ դաստիարակության մեծ պակաս:

## ՄԵՂՄՈՂ՝

- Յուրաքանչյուրի հնարավորությունները, տաղանդը բացահայտել, օգտագործել, ուղղորդել
- Երկարօրյա ուսուցման և ուսանելի համակարգչային ծրագրերի միջոցով (<<Արմաթ>> ճարտարագիտական աշխատանոց) նվազեցնել որոշ առարկաներից թերանալը,անգործությունը.
- Դասընթացներ առողջ ապրելակերպին միտված.
- Արհեստագործական խմբակներ
- Մասնագիտական կողմնորոշման խմբակ

## 1.5 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

**Մանկավարժական աշխատողների թիվը՝ 32,**

**որից ուսուցիչներ՝ 29,**

**տարակարգ ստացած-2,**

**լավագույն ուսուցիչ-2՝ Նաիրա Անդրեասյան, Լիլիթ Միսակյան**

**մենթոր-1՝ Նաիրա Անդրեասյան**

**կամավոր ատեստավորված-4՝ Վարշամ Ադամյան՝ <<Ֆիզիկա>> առարկայից՝ 93 միավոր, Արմինե Հովսեփյան <<Մաթեմատիկա>> առարկայից 70 միավոր, Սոֆյա Քերոբյան <<Հայոց լեզու>> առարկայից՝ 77 միավոր, Անահիտ Մանուչարյան <<Անգլերեն>> առարկայից՝ 78.6 միավոր**

| ***<u>Ընդհանուր փվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուսպարիների համար</u>***<br>Ցուցանիշը | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | Փոփոխություն ների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Ուսուցիչների ընդհանուր թիվը | 24 | 28 | 29 | Աճել է |
| Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը | 24.2 | 17,5 | 22.1 | Աճել է |

*__Ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար__*

| Ուսուցիչների թիվը | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Մինչև 30 տարեկան | 2 | 2 | 3 | Աճել է |
| 31-ից 40 տարեկան | 10 | 11 | 5 | Նվազել է |
| 41-ից -50 տարեկան | 7 | 8 | 8 | Չի փոխվել |
| 51-ից -55 տարեկան | 4 | 4 | 5 | Աճել է |
| 56 տարեկան և ավելի | 9 | 9 | 8 | Նվազել է |

*__Ուսումնական_հաստատության ղեկավար և վարչական կազմը__*

| **Պաշտոնը** | **Անունը, ազգանունը, հայրանունը** | **Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը** |
|---|---|---|
| Տնօրեն | Լիլիթ Կառլենի Միսակյան | 15.09.2018 |
| Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ | Հայկուհի Նորիկի Մանուկյան | 01.09.2023թ. |
| Տնօրենի մասնագիտացված աջակցությունների գծով տեղակալ | Ջեմմա Մանվելի Եղիազարյան | 15.02.1999թ. |
| Զինղեկ | Հայկ Մնացականի Տոնոյան | 19.09.2015թ. |
| Գլխավոր հաշվապահ | Վահրամ Թառոյան Իշխանի | 1.09.2012թ. |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Հաստատությունում դասավանդող բոլոր մասնագետները ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն<br>• Բոլոր առարկաները ունեն համապատասխան մասնագետներ<br>• Նոր մեթոդների կիրառում դասապրոցեսում<br>• Մեթոդմիավորումների համակարգված աշխատանք<br>• Սկսնակ ուսուցիչների ուղղորդում և աջակցություն՝ մեթոդական, մասնագիտական<br>• Ատեստավորված կազմ<br>• Կամավոր ատեստավորում անցած մանկավարժներ 4՝ (ֆիզիկա, մաթեմատիկա, հայոց լեզու, անգլերեն առարկաներից)<br>• Տարակարգ ունեցող մանկավարժներ<br>• Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, փոխօգնության մշակույթ<br>• Հիմնականում աշակերտակենտրոն  ուսուցում<br>• լրացուցիչ նյութերի օգտագործում<br>• ՏՀՏ տեխնոլոգիաների օգտագործում<br>• Փայլուն դասվարական կազմ<br>• Լավագույն ԲՏՃՄ առարկաների մասնագետներ<br>• Լավագույն փորձի կենտրոնացում՝ տարրական և միջնակարգ օղակներում<br>• Համագործակցային, մասնակցային աշխատանք, ինչը բերում է ուսուցիչների և անձնակազմի համախմբում ընդհանուր տեսլականի և նպատակների շուրջ<br>• Մանկավարժներն ունեն ինքնազարգացման մեծ հնարավորություններ<br>• Վերապատրաստումների հնարավորություններ<br>• Ինքնազարգացման բաց ռեսուրսների առկայություն | • Կոչումով մանկավարժների թվի պակաս<br>• Աշխատանք ծանրաբեռնված դասարաններում (օրինակ՝ առկա  են 33, 34 աշակերտ ունեցող դասարաններ)<br>• Առցանց կրթության գործիքների թերի տիրապետում (google –classroom, zoom, teams, Knan academy և այլն)/ավագ սերնդի ուսուցիչների մոտ/<br>• Նորարարական մեթոդներից որոշակի խուսափում<br>• Ուսուցիչների խրախուսման սահմանափակ մեխանիզմներ և միջոցներ<br>• Ինքնազարգացմանն ուղղված քայլերի անվստահություն<br>• Դասարանի կառավարման մարտահրավերներ<br>• Իրեն <<հալածված>>, <<անպաշտպան>> զգալու սինդրոմ (բացառություններ)<br>• Դպրոցում աշխատելու ցածր մոտիվացիա<br>• Նոր կադրերի պակաս<br>• Դասապրոցեսում ՏՀՏ գործիքների պասիվ կիրառություն<br>• Մանկավարժական աշխատողի կողմից |

| | |
|---|---|
| • Հաստատությունն ունի նախաձեռնող մանկավարժների կուռ կորիզ<br>• Առցանց հարթակների մշակում և գործածություն ուսուցիչների կողմից (մասնավորապես ֆիզիկայի ուսուցիչ Վ. Ադամյանը համավարակի շրջանում ստեղծել էր առցանց ուսուցման և գործանական աշխատանքների հեղինակային հարթակ)<br>• Բազմատեսակ մասնագիտական դասընթացների մասնակցություն<br>• Դպրոցն ապահովում է ուսուցիչների հասանելիությունը անհրաժեշտ ռեսուրսներին՝ մարդկային, ժամանակակից նյութատեխնիկական՝ մանկավարժական ընտրված մեթոդների և մոտեցումների կիրառությունն ապահովելու համար<br>• Հաստատությունում որոշումները կայացվում են համագործակցության, համերաշխության մթնոլորտում, առանձին իրավիճակների կամ խնդիրների քննարկման ժամանակ ապահովում է բոլոր կողմերի մասնակցությունն ու նրանց դիրքորոշումների ներկայացումը<br>• Աշխատակազմի ժողովրդավար կառավարում և մասնագիտական շարունակական զարգացում.<br>• Մանկավարժական աշխատողների ընտրությունն իրականացվում է արդարացի և բարեխիղճ եղանակով, գործում են նրանց աջակցության և զարգացման համակարգեր<br>• Մանկավարժական աշխատողների թափուր տեղերի համալրումն իրականացվում է սահմանված ընթացակարգերի համաձայն՝ ապահովելով գործընթացների թափանցիկությունն ու արդարությունը<br>• Տնօրինության կողմից իրականացվում է մանկավարժների վերապատրաստումների, ծրագրերի որակի մշտադիտարկման և հետադարձ կապի ապահովում՝ դրանց արդյունքում մանկավարժների կողմից ուսուցման գործընթացում նոր հմտությունների, մեթոդների կիրառությունն ապահովելու համար: | բարեվարքության կանոնների խախտման մասնավոր դեպքեր<br>• Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի հետ աշխատանքի թերություններ, անհարկի թղթաբանություն |

## ՆՊԱՏԱԿ

1. Շարունակաբար խթանել ուսուցիչների որակավորման բարձրացման հնարավորությունները՝ ստեղծելով համագործակցային միջավայր ոլորտի շահառու խմբերի, վերապատրաստող կազմակերպությունների հետ:
2. Մանկավարժական համակազմի որակական և մասնագիտական կարողունակությունների բարձրացում, մրցունակ անձնակազմի ձևավորում:

## ԽՆԴԻՐՆԵՐ

1. Մշակել ուսուցիչների վերապատրաստման կայուն համակարգ՝ հիմնված կամավոր և պարտադիր ատեստավորման կարգերի, ինչպես նաև ուսուցիչների անհատական կարիքների վրա:
2. Մշակել ուսուցիչների ինքնագնահատման և խրախուսման ընթացակարգեր:
3. Ապահովել դպրոցում մանկավարժների ստեղծագործական գործունեության համար պատշաճ պայմաններ:
4. Մանկավարժական համակազմի մասնագիտական կարողությունների արդիականացում և զարգացում:
5. Նպաստել ուսուցչի մեթոդական վարպետության կատարելագործմանը:
6. Համալրել ուսուցչական կազմը բարձրակարգ մասնագետներով:
7. Ստեղծել և վստահության մթնոլորտ՝ սկսնակ ուսուցիչների համար:
8. Հետևել հաստատությունում աշխատողների բարեվարքությանը, համերաշխությանը, սոցիալական արդարության պահպանմանը

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Ծանոթություն: Հայաստանի Հանրապետության կառավարության 16-ը փետրվարի 2023թ. N216-Ն որոշումով ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի փոփոխության հետևանքով 2023թ. սեպտեմբերի 1-ից պատասխանատուները կփոխվեն, այդ պատճառով պարզապես գրվել են՝ <<տեղակալ կամ տեղակալներ>>:**

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ |
|---|---|---|
| • Գործածության մեջ դնել ուսուցիչների ինքնագնահատման սանդղակը՝ (կցված է) միաժամանակ սահմանելով նյութական խրախուսման սանդղակներ | Յուրաքանչյուր կիսամյակի վերջում | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ |
| • Գործածության և իրազեկության դաշտում պահել ուսուցչի կամավոր և պարտադիր ատեստավորման կարգը | Ըստ սահմանված ժամանակացույցի | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ |
| • ՏՀՏ ոլորտի բարձրակարգ մասնագետների հետ համագործակցելով ապահովել ուսուցչի հասանելիությունը անհրաժեշտ ռեսուրսներին | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ |
| • Հաստատությունում ապահովել մանակավարժական ինքնավստահություն ակադեմիական ազատություն, դրական ու ապահով մթնոլորտ բոլոր շահակիցների համար: | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ |

| | | |
|---|---|---|
| | | |
| • Գործածության մեջ դնել մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները: | 2023թ, սեպտեմբերից | Տնօրեն, մանկավարժական խորհուրդ |
| • Հարցում անցկացնել ուսուցիչների շրջանում՝ պարզելու վերջիններիս անհատական կրթական կարիքները. Ըստ այդմ մշակել գործողությունների ծրագիր | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ |
| • Ավելացնել վերապատրաստող ուսուցիչների և մենթորների թիվը | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ |
| • Կազմակերպել դասարանի ղեկավարման և երեխաների հետ հաղորդակցության վերաբերյալ ինտենսիվ դասընթացներ՝ սոցիալական արդարության, ներառարականության, հավասարության վերաբերյալ | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ |
| • Ստեղծել  հաջողված հրապարակային և տեսադասերի շտեմարան | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ |

| | | |
|---|---|---|
| • Հզորացնել մեթոդմիավորումների կարողունակությունները՝ դիտարկելով դրանք կրթական նոր բովանդակության, նորարարական մտքի և նոր տեխնոլոգիաների տեղայնացման կարևորագույն օղակներ: | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ |
| • Նպաստել համընդհանուր ներառական կրթության գործընթացում ուսուցիչների ներգրավմանը, հմտությունների զարգացմանը՝ տարբեր սեմինարների, վեբինարների միջոցով | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, ՀՄԿ, ՏՄԱԿ |
| • Ավելացնել տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Մեծ տեղ հատկացնել ուսուցիչների մասնագիտական վարպետության բարձրացմանը՝ օգտագործելով այնպիսի գործիքակազմ, ինչպիսիք են՝<br>-ստեղծագործական հաշվետվությունները<br>-գործնական և ինտելեկտուալ խաղերը<br>-դաս-դեբատները<br>-դաս-սեմինարները<br>-դաս-հանդիպումները<br>-հրապարակային դասերը<br>-դաս նախագծերը | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |

| | | |
|---|---|---|
| • Խթանել ուսուցիչների ստեղծագործական, նախագծային, հետազոտական հմտությունները | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Կազմակերպել հանդիպումներ առաջատար փորձագետների հետ՝ փորձի փոխանակման, ոլորտի արդիական խնդիրների վերհանման նպատակով | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Տարբեր հաստատությունների գործընկեր- ուսուցիչների հետ համատեղ իրականացնել ծրագրեր, կրթական բնագավառում աշակերտական կոնֆերանսներ, փորձի փոխանակումներ, մրցույթներ, քննարկումներ և այլն: Մասնակցել գիտամեթոդական գիտաժողովների, փորձի փոխանակման միջոցառումների: | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Խթանել համագործակցությունը միջազգային և կրթական կառույցների հետ: | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Կազմակերպել մանկավարժական ձեռքբերումների տարեկան փառատոն, օրինակ՝ <<Վիրաբյան կրթօջախ>> | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |

| | | |
|---|---|---|
| մրցանակաբաշխություն, որի շրջանակներում մրցանակներ շնորհել ակտիվություն ցուցաբերած ուսուցիչներին Լայնորեն լուսաբանել դպրոցի կայք էջում, սոցիալական հարթակներում, սահմանել անվանակարգեր՝<br><<Տարվա նորարար>><br><<Տարվա բացահատում>><br><<Լավագույն դասղեկ>><br><<Լավագույն դասվար>> և այլն: | | |
| • Ներգրավել միջազգային համագործակցության գծով խորհրդատուներ (նախկին շրջանավարտներ, նախկին ուսուցիչներ, ոլորտի մասնագետներ): | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |

## ՌԻՍԿԵՐ

- Ուսուցչի ընտրության կարգի բարդացում
- Լավագույն կադրերի արտահոսք
- Մոտիվացիայի անկում
- Ուսուցչի հեղինակության վրա ազդող բացասական երևույթներ

## ՄԵՂՄՈՂ՝

- Բարձրագույն կրթությամբ մասնագետը համապատասխան կրեդիտների դեպքում կարող է աշխատել դպրոցում:
- Աշխատավարձերի բարձացում:

## 1.6 ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ՈՒ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ

Հաստատությունը շատ է կարևորում ՏՀՏ տեխնոլոգիաների և էլեկտրոնային կրթական ռեսուրսների ներդրումը իր գործունեության մեջ և դասապրոցեսում:

Դպրոցում առկա է ինտերնետային կապ, թվով 19 համակարգիչ, 4 պլանշետ, 2 պրոյեկտոր, 1 նոութբուք

Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքներին նպաստում են հետևյալ կրթական կայքերը՝

ա) ուսումնադաստիարակչական

1. Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն՝ ԿՏԱԿ՝ ըստ իր դասակարգված բաժինների
2. ԿԶՆԱԿ հիմնադրամը նույնպես նպաստում է կրթության որակի զարգացմանը
3. <<Հայկական կրթական միջավայր>> կայքը , որի շնորհիվ կապ է հաստատվում կրթական ողջ համակարգի միջև, ապահովում է տեղեկատվություն թափուր աշխատատեղերի, կազմակերպությունների հայտարարությունների և այլնի մասին
4. <<Պաշարների շտեմարան>> կայքը, որտեղ տեղադրվում են կրթական, ուսումնամեթոդական էլեկտրոնային պաշարներ
5. <<Հեռավար ուսուցում>> համակարգ, ինչը 2020թ. մեղմեց կրթաուսումնադաստիարակչական խափանումների ռիսկերը: Վերոհիշյալ տեխնոլոգիաներն ու նորարարությունները մեծ նշանակություն ունեն դպրոցի գործունեության համար՝ որպես ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման, համակարգման, պլանավորման արդյունավետ միջոցներ:

բ) վարչատնտեսական

1. <<Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ>>-ի վարչական ռեգիստրում ներառված են տվյալներ մեր հաստատության գտնվելու վայրի, կառուցվածքի, ենթակառուցվածքների, շինության վիճակի, մասնաշենքների քանակի,

ունեցած ուսումնական պարագաների սովորողների, դասարանների թվի, հաստիքացուցակի և այլ անհրաժեշտ տեղեկություններ:

2. Դպրոցից դպրոց սովորողին տեղափոխելու գործընթացի նորացում
3. Նորարարությունների շարքում են պետական նմուշի ավարտական փաստաթղթերը՝ հիմնական կրթության վկայականները, միջնակարգ կրթության ատեստատները, որոնք տրամադրվուն են էլեկտրոնային եղանակով

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Հաստատության կողմից կրթության կառավարման տեղեկատվական համակարգը և ռեգիստրը սահմանված ժամկետներում և կարգով վարելը բերել է ճիշտ ֆինանսավորման տրամադրման | |
| Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը հնարավորություն է տալիս թվայնացնել երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների գնահատման, վերագնահատման, արձանագրությունների կազմման գործընթացները | |
| Համակարգիչների առկայություն: | -Համակարգիչների թիվը քիչ է |
| Պարբերաբար անցկացվող սեմինարներ, վեբինարներ՝ միտված նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը | -Չկան էլեկտրոնյին գրատախտակներ |
| Տիրապետում են MS Teams, Zoom միասնական կրթական հարթակին Ակտիվ համագործակցություն կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ)-ի հետ և իր դասակարգված բաժինների հետ | -ՏՀՏ տեխնոլոգիաների կիրառմամբ դասերը առկա են, սակայն դեռևս չեն ապահովում ժամանակակից կրթական պահանջները |

| | |
|---|---|
| Օգտագործում են այլ տարբեր էլեկտրոնային կրթական ռեսուրսներ՝ Koriz, <<Իմ դպրոց>>, <<Աշխարհացույց>> | - ՏՀՏ տեխնոլոգիաների և տարեց ուսուցիչների թերի գիտելիքներ |
| Տեղեկատվությունը արագ և օպերատիվ հասանելի դարձնելու, աշխատանքները համակարգելու համար վարվում են առցանց հարթակներ, օգտագործվում են նաև էլեկտրոնային դասագրքեր և լրացուցիչ աղբյուրներ | -Գրադարանը թվայնացված չէ |
| Համարյա անթերի վարվում են emis.am էլեկտրոնային մատյանը և դպրոցի տեղեկատվական բազայի մուտքագրումը, թվայնացումը, որը բերում է հաստատության գործունեության **նորացմանը** | -Տպիչների 2 և սքաներների 1 հատ լինելը |
| Էլեկտրոնային դիտափորձեր, <<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>> առարկաներից և էլեկտրոնային քարտեզներ <<Պատմություն>>, <<Աշխարհագրություն>> առարկաներից | Համակարգիչները տեղադրված են հիմնականում համակարգչային դասարաններում |
| Դպրոցի ձեռքբերումներից է <<Արմաթ>> ճարտարագիտական աշխատանոցը, որը շեշտը դնելով համալիր ինժեներական կրթության վրա՝ հնարավորություն է տալիս դպրոցի 10-18 տարեկան աշակերտներին ստանալու տեխնոլոգիական կրթություն:<br>Երեխաները խորացված սովորում են նաև <<միկրոկանտրոլերներ>>-ի, տվիչների, սալիկների ներկառուցված ծրագրավորում, ռոբոտների ղեկավարում, խելացի սարքերի նախագծում և ծրագրավորում, տիրապետում են եռաչափ և լազերային տպագրության աշխատանքներին:<br>Աշխատանոցի սաները ակտիվ մասնակցություն են ունենում նաև ռոբոտաշինության, ծրագրավորման մրցույթներին, ինչպես նաև մարզային և հանրապետական ցուցահանդեսներին: | |
| Դպրոցն ունի նաև սմարթ դասասենյակ, որը կահավորվել է ԿԳՄՍ նախարարության տրամադրած նյութատեխնիկական պարագաներով (պրոյեկտոր, համակարգիչ, տեսախցիկ, միկրոֆոն, բազմաֆունկցիոնալ տպիչ, UPS համակարգ): Դասասենյակը նպաստում է ակտիվ ուսումնառության կազմակերպմանը, | |

| | |
|---|---|
| խորհրդակցությունների, սեմինարների, ուսումնական ֆիլմերի դիտման, փորձի փոխանակման հարթակ է: Ծառայում է ներառական, համակցված դասերի կազմակերպմանը: | |

## ՆՊԱՏԱԿ

2023-2028թթ. հասնել տեխնիկապես ՏՀՏ միջոցներով հագեցած դպրոցական կրթական միջավայրի՝ հեշտացնելով և արդյունավետ դարձնելով կրթական գործընթացը:

## ԽՆԴԻՐՆԵՐ

1.Համալրել ՏՀՏ տեխնոլոգաները կրթական ծրագրերի բոլոր ուղղություններով, կառավարում, ուսումնադաստիարակչական աշխատանքներ, վարչատնտեսական գործունեություն:

2. Կիրառել ՏՀՏ՝ որպես կրթության որակի մատչելիության և բովանդակության արդիականացման բարելավման գործիք:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ |
|---|---|---|
| Ունենալ հզոր ինտերնետային ծածկույթ | 2023թ. մինչև հունվար | Տնօրեն, տնտեսվար |
| Կրթական միջավայրը առավել թվայնացնել (գրադարան, էլեկտրոնային գրատախտակներ) | 2023-2024թթ. | Տնօրեն, գրադարանավար, տնտեսվար |
| Ավելացնել համակարգիչների թիվը Ձեռք բերել տպիչներ, սքաններներ | 2025թ. | Տնօրեն, տնտեսվար |
| Խթանել ուսուցիչների ՏՀՏ | 2023-2028թ, | Տնօրեն, տեղակալներ, մանկավարժական համակազմ |

| | | |
|---|---|---|
| հմտությունները. Ավելացնել ՏՀՏ կիրառմամբ դասերը, նախագծային աշխատանքներ | | |
| Մեդիագրագիտության վերաբերյալ դասեր, քննարկումներ, գործնական աշխատանքներ | 2023-2028թ, | Տնօրեն, տեղակալներ, մանկավարժական համակազմ |
| e-draft.am կայքի օգտագործում, հանրային քննարկման դրված ակտերի լուսաբանում, քննարկումներին ակտիվ մասնակցություն | 2023-2028թ, | Տնօրեն, տեղակալներ, մանկավարժական համակազմ, մեթոդմիավորման նախագահներ |
| Իրավական ակտերի էլեկտրոնային փաթեթների, նյութերի հասանելիություն | 2023-2028թ, | Տնօրեն, գործավար, տեղակալներ, մանկավարժական համակազմ, մեթոդմիավորման նախագահներ |
| Համակարգված աշխատանք ԿՏԱԿ-ի բոլոր ենթակայքերում | 2023-2028թ, | Տնօրեն, գործավար, տեղակալներ, մանկավարժական համակազմ, մեթոդմիավորման նախագահներ |

## 1.7 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՈՐԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության բովանդակության նորացման հիմնախնդիրները լուծում են չափորոշչահեն կրթությամբ: Նոր չափորոշչով կրթության նորովի կազմակերպման ռազմավարություն է հանդիսանում կարողունակությունների (կոմպետենցիաների) վրա հիմնված կրթությունը: Այն իրենից ներկայացնում է գիտելիքների, հմտությունների դիրքորոշման և արժեքի համակարգ:

Մանկավարժների մասնագիտական պատրաստվածությամբ և հմտություններով է պայմանավորված թե ինչպիսի կարողունակություններով օժտված քաղաքացիներ կձևավորվեն հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնառության ավարտին: Կրթության որակը կախված է նրանից թե որքանով է ուսուցիչը կարողունակ գործընթացի պլանավորման, կազմակերպման, գիտելիքների փոխանցման հարցերում և որքանով է կարողանում բավարարել չափորոշչային պահանջները կրթական գործընթացում: Ուսուցիչը հստակ պետք է պատկերացնի նոր չափորոշչի պահանջը և ճիշը կատարի առարկայի ուսուցման պլանավորումը, դասավանդումը, գնահատումը: Բացի ուսումնական պրոցեսից այս ամենին պետք է նպաստեն արտադասարանական, արտադպրոցական խմբակները, առարկայական նախագծերը: Դպրոցը շարունակական հետևողական աշխատանք է տանում կրթության որակի և արդյունավետության ուղղությամբ: Նոր չափորոշչով քայլ առ քայլ անցում է կատարվում գիտելիքահեն կրթությունից կարողունակահեն կրթության: Կրթության որակի բարելավման, որակի չափման ուղղությամբ կիրառում է մի շարք գործիքներ և միջոցառումներ՝

- Հայտորոշիչ գրավոր աշխատանքներ՝ ստուգելու մնացորդային գիտելիքը

- Տնօրինության կողմից գրավոր աշխատանքներ

-Բանավոր առարկաներից փորձնական քննություններ (<<Հայոց պատմություն>>, <<Գրականություն>>, <<Ռուսաց լեզու>> <<Անգլերեն>> առարկաներից):

-Ինտենսիվ դասալսումներ, դասի դիտարկում՝ շեշտը դնելով չափորոշչի պահանջների վրա

-Առարկայական միամսյակներ, որի միջոցով ուսումնասիրվում է տվյալ առարկայի դրվածքը

Ներքոհիշյալ ցուցանիշները ցույց են տալիս հաստատությունում կրթության որակի դինամիկան

## ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

| | 2018-2019 ուստարի | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր առաջադիմութնուն | 100% | 100% | 100% | 100% | Ընթացքի մեջ է |
| Որակական առաջադիմություն | 72% | 78% | 79% | 71% | Ընթացքի մեջ է |



2020-2021 ուստարի

Բուհ ընդունվող շրջանավարտներ՝ 9

Տարբեր առարկաներից օլիմպիադաների մարզային փուլ-5 աշակերտ

2021-2022 ուստարի

Բուհ ընդունվող շրջանավարտներ՝ 8: Տարբեր առարկաներից օլիմպիադաների մարզային փուլ-5 աշակերտ,հանրապետական՝ (ԿԳՄՍ նախարարի առաջին կարգի դիպլոմ՝ Էդգար Մինասյան <<ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն>> առարկայից, ԿԳՄՍ նախարարի երկրորդ կարգի դիպլոմ՝ Արմենուհի Պետրոսյան <<Հայ գրականություն>> առարկայից)

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԲՏՃՄ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ 2019 – 2020 ՈՒՍՏԱՐՈՒՄ



## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ 2019-2020 ՈՒՍՏԱՐՈՒՄ



## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՑ

## 2019 – 2020 ՈՒՍՏԱՐՈՒՄ



# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԲՏՃՄ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ 2020 – 2021 ՈՒՍՏԱՐՈՒՄ



## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ 2020 – 2021 ՈՒՍՏԱՐՈՒՄ



## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ

## 2020 – 2021 ՈՒՍՏԱՐՈՒՄ



# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԲՏՃՄ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ 2021 – 2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ



# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ 2021 – 2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ



## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ  ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ

## 2021-2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ



# 2022 -2023 ուստարվա ապրիլ – մայիս ամիսների հաշվետվություն

Իրականացվել են **դասալսումներ** ԲՏՃՄ ուսումնական բնագավառի առարկաներից՝ նպատակ ունենալով ուսումնասիրել նշված առարկաների **դասավանդման որակը**, սովորողների **պատրաստվածության մակարդակը**: 5–11–րդ դասարաններում գրավոր աշխատանքներ են տրվել հանրահաշվից, երկրաչափությունից, քիմիայից, կենսաբանությունից, ֆիզիկայից, աշխարհագրությունից, ինֆորմատիկայից: Ըստ վերլուծության՝ արդյունքը գնահատվում է լավ, քանի որ ցածր տոկոս է կազմում անբավարար մակարդակը:

Ֆիզիկայից միջինացված միավորը բարձր է 7-րդ Բ դասարանում՝ 5.1, քիմիայից՝ 10–րդ դասարանը՝ 6.3, կենսաբանությունից՝ 11-րդ դասարանը՝ 6.6, հանրահաշվից, երկրաչափությունից՝ 7-րդ Բ դասարանը՝ 6.7, մաթեմատիկայից՝ 6-րդ Ա դասարանը՝ 7.6, բնագիտությունից՝ 6-րդ Ա դասարանը՝ 6.6, աշխարհագրությունից՝ 11-րդ դասարանը՝ 7 միավոր



# 2022 -2023 ուստարվա փետրվար -մարտ ամիսների հաշվետվություն

Գրավոր աշխատանքներ են տրվել հայոց լեզվից V – XI դասարաններում: Արդյունքները հետևյալն են՝ V – VIII և X – XI դասարանների 209 մասնակից սովորողներից

- անբավարար գնահատական ունի 58 սովորող
- գերազանց գնահատական ունի 15 սովորող

**Առաջադիմության տոկոսը՝ 72.5:**



## 2022 -2023 ուստարվա փետրվար –մարտ ամիսների հաշվետվություն

**Գրավոր աշխատանքներ են տրվել ռուսաց լեզվից և անգլերենից**

**VII և VIII դասարաններում: Արդյունքները հետևյալն են՝**

| ԱՌԱՐԿԱ | ՈՒՍՈՒՑԻՉ | ԴԱՍԱՐԱՆ | ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ | ԳՆԱՀԱՏԱԿԱՆ |
|---|---|---|---|---|
| Անգլերեն | Է. Գարախանյան | 7ա | 4<br>2<br>4<br>6<br>2<br>3<br>2<br>4 | 3<br>4<br>5<br>6<br>7<br>8<br>9<br>բացակա |
| Անգլերեն | Է. Գարախանյան | 7բ | 3<br>3<br>4<br>5<br>5<br>5<br>6<br>4 | 3<br>4<br>5<br><br>6<br>7<br>8<br>9 |
| Անգլերեն | Ա. Մանուչարյան | 8ա, 8բ | 2<br>1<br>11<br>11<br>8<br>4<br>1 | 2<br>3<br>4<br>5<br>6<br>7<br>8 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | 1<br>2 | 10<br>բացակա |
| Ռուսաց լեզու | Ն. Աղաբեկյան | 7ա, 7բ | 1<br>2<br>7<br>8<br>5<br>12<br>4<br>9<br>1<br>8 | 1<br>3<br>4<br>5<br>6<br>7<br>8<br>9<br>10<br>բացակա |
| Ռուսաց լեզու | Ա. Խաչատրյան | 8ա | 1<br>1<br>7<br>4<br>3<br>2<br>4<br>2 | 1<br>3<br>4<br>5<br>6<br>7<br>8<br>9 |
| Ռուսաց լեզու | Ն. Աղաբեկյան | 8բ | 1<br>1<br>2<br>6<br>4<br>3<br>2 | 1<br>4<br>5<br>6<br>7<br>8<br>9 |


8
7
6
5
4
3
2
1
0
Անգլերեն 7
Ռուսերեն 7
Անգլերեն 8
Ռուսերեն 8

| ՈւԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| • Ուսումնական գործընթացի նպատակների և խնդիրների հստակ սահմանում<br>• Ուսումնառության արդյունքների հետևողական, քայլ առ քայլ բարելավում<br>• Կրթական գործընթացի կատարողականի բարձր ցուցանիշներ<br>• Նորարական մեթոդների կիրառում<br>• Չկատարված կամ թերի կատարված գործողությունների պատճառների վերհանում<br>• Թեմատիկ պլանները ունեն չափորոշչային և ծրագրային համապատասխանություն<br>• Դասապրոցեսում ներդրվում է նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, արդյունավետ մեթոդներ<br>• Գործում է ներդպրոցական վերահսկողության արդյունավետ համակարգ՝ ուսումնական տարվա ընթացքում ուսումնառության և ուսուցման գործընթացում առկա խնդիրների բացահայտման և կարգավորման նպատակով<br>• Դասերի, ուսումնական միջոցառումների բարձր որակ<br>• Շերտավոր ուսուցման կիրառում<br>• Առարկայական միամսյակների անցկացում<br>• Փորձնական քննությունների՝ 9-րդ դասարաններում (բանավոր առարկաներից) անցկացում | • Կարողունակությունների վրա հիմնված կրթության կազմակերպման գործնականում գիտելիքի պակաս<br>• Նախագծային ուսուցման ոչ բավարար հմտություններ (դեռևս)<br>• Գերծանրաբեռնված դասարաններ<br>• Բարձր դասարաններում սովորելու նկատմամբ հետաքրքրության կտրուկ նվազում<br>• Ուսուցիչների ժամային մեծ ծանրաբեռնվածություն<br>• Ուսուցիչների արտահոսք պետական դպրոցներից<br>• Որոշակի առարկաներ (հատկապես ԲՏՃՄ ) միայն մեկ ուսուցչի առկայություն, ինչը նվազեցնում է առարկայի մրցունակությունը<br>• Հեռավար ուսուցման հետևանքով կրթության որակի զգալի անկում |

| | |
|---|---|
| • Մշտադիտարկում տարբեր չափանիշներով՝ հայտորոշիչ թեստեր գրավորներ տնօրինության կողմից, դասալսումներ, քննարկումներ, մենթորության պրակտիկա (ՀՄԿ) և այլն<br>• Թեմատիկ պլանների միասնական մշակում<br>• Հեռավար հարթակների կիրառություն՝ արտակարգ և անհրաժեշտ իրավիճակներում<br>• Մեթոդական միավորումներում ուսումնասիրվում է փոփոխված չափորոշչի նոր պահանջները և արդեն մշակվում են դրանց ներդրման մանրամասն ծրագրեր<br>• Աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում են մեթոդմիավորման նիստերում, քննարկվում են առաջադիմության որակը բարձրացնելու գործողություններ<br>• Ապահովվում են ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը: | |

**ՆՊԱՏԱԿ**

Կրթության որակի բարելավում, չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովում, ներառական որակյալ կրթական միջավայր:

**ԽՆԴԻՐՆԵՐ**

-Վերջնարդյունքների գնահատում մնացորդային գիտելիքի ստուգում:

-Ներառական կրթության կազմակերպման հմտությունների կատարելագործում

-Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում:

-Օտար լեզուների խորացված գիտելիքներ

-Նախագծային աշխատանքների ընդլայնում

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ |
|---|---|---|
| • Ուսումնասիրել փոփոխված չափորոշչային նոր պահանջները մեթոդմիավորումներում և մշակել դրանց ներդրման քայլաշար-ծրագիր | 2023 օգոստոս-սեպտեմբեր | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Իրականացնել հարցումներ միջին և բարձր դասարանների աշակերտների շրջանում՝ մշակութային, հոգևոր, կրթական, ինչպես նաև կոմպետենցիաների զարգացմանն ուղղված կարիքների բացահայտման և մոտիվացիոն մեխանիզմների ներդրման նպատակով՝ կատարել դիտարկումներ, ուսումնասիրություններ | 2023թ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Ցածր առաջադիմություն ունեցող և ԿԱՊԿՈՒ աշակերտների համար երկարօրյա ուսուցման կազմակերպում | 2023թ. օգոստոսից | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, հոգեբան, ՏՄԱԿ |

| | | |
|---|---|---|
| • Հաստատությունում ապահովել սոցիալական արդարությունը՝ նույն պայմանների, նույն հնարավորություններ պահանջի տեսքով: Նոր չափորոշիչն այս խնդիրը լուծում է՝ <<Նույն մոտեցումը հասանելի բոլոր դպրոցների ու երեխաների համար>> | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, հոգեբան, ՏՄԱԿ |
| <<Տեխնոլոգիա>> առարկայի խմբերի բաժանումը նոր չափորոշչով լինելու է ըստ երեխաների նախասիրությունների, այսինքն՝ չի լինելու սեռային բաժանում, հետևաբար խմբերը ձևավորելիս պետք է հաշվի առնել երեխաների նախասիրությունները | 2023թ. օգոստոս-սեպտեմբեր | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Սոցիալական արդարության վրա հիմնված կրթությունը առաջնորդել 4 հիմնական սկզբունքներով՝<br>1. Հավասար հասանելիություն և մատչելիություն բոլոր երեխաների համար<br>2. Իրավունքների պաշտպանվածություն և փոխկապակցվածություն՝ անկախ գտնվելու վայրից | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, հոգեբան, ՏՄԱԿ |

| | | |
|---|---|---|
| 3. Որակյալ կրթություն բոլորին,ինչպես նաև երեխայակենտրոն մոտեցում | | |
| • Կազմակերպել անձնակազմի ինտենսիվ վերապատրաստման դասընթացներ՝ կարողունակությունների վրա հիմնված կրթության բաղադրիչին անցնելու նպատակով | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Զարգացնել նախագծային ուսուցման, ուսումնա-հետազոտական աշխատանքների կազմակերպման կարողություններն ու հմտությունները | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Կազմակերպել մեթոդական սեմինարների, քննարկումների, փորձի փոխանակման միջոցառումներ յուրաքնաչյուր մեթոդմիավորումում և այլ գործընկեր դպրոցների հետ սերտ համագործակցելով: Համագործակցում ենք Արամուսի, Ջրվեժի, Գեղաշենի դպրոցների հետ, ստեղծել ենք միասնական տարրական մեթոդական միավորում, իրականացնում ենք ԿԶՆԱԿ-ի <<Ընթերցանությունը տարրական դպրոցում>> | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |

| | | |
|---|---|---|
| ծրագիրը: | | |
| • Մշակել որակի կառավարման միասնական համակարգ հետևյալ բաղադրիչներով՝ Կրթության կառավարման միասնական տեղեկատվական համակարգում կուռ, հստակ սահմանումներ և համակարգավորում<br>Սահմանել դասապլանի միասնական կառուցավածք, մշտապես ստուգել դրա առակայությունը | 2023թ. օգոստոս-սեպտեմբեր | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Թեմատիկ պլանավորման մշակված միասնական ստանդարտները տեղայնացնել բոլոր մեթոդմիավորումներում, հաջողված փորձը կիրառել:<br>Կենտրոնացված մշակել թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքների հարցաշարեր: | 2023թ. օգոստոս-սեպտեմբեր | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Նոր չափորոշչային գնահատման սկզբունքները ուսումնասիրել բոլոր տարիքային խմբերում՝ հիմք ընդունելով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, կարողունակությունների աստիճանը | 2023թ. սեպտեմբերից սկսած | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Սովորողների առաջադիմության ստուգման, գնահատման, կրթական կարիքների | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |

| | | |
|---|---|---|
| բավարարման նպատակով շարունակել կիրառել հետևյալ մեխանիզմները<br>➢ Տնօրինության կողմից գրավոր աշխատանքներ<br>➢ Ինտենսիվ դասալսումներ<br>➢ Առարկայական նոր չափորոշիչների պահանջները ապահովող օրինակելի դասեր<br>➢ Նախագծային աշխատանքներ<br>➢ Հրապարակային դասեր, սեմինարներ<br>➢ Հայտորոշիչ թեստեր<br>➢ Պարբերաբար հարցումների միջոցով դասավանդման որակի գնահատում<br>➢ Ընդլայնել արդյունքների գնահատման վերլուծական բազան՝ հավաքելով բոլոր աշխատողների հաշվետվությունները, ամփոփելով արդյունքերը | | |

| | | |
|---|---|---|
| • Ամփոփելով արդյունքները ներքին գնահատման հաշվետվության մեջ, որը հիմք պետք է դառնա հաջորդ տարվա ռազմավարական ուղղությունների հստակեցման և բացահայտված թերություններ վերացման համար: | Յուրքանչյուր ուսումնական տարվա վերջում, 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Եվ այս արդյունքների հիման վրա յուրաքանչյուր կիսամյակ կրթական ցուցանիշների մարտավարության մշակում | Յուրքանչյուր կիսամյակի ավարտին | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Բարելավել օժտված երեխաների հետ աշխատանքը և մշակել նոր մոտեցումներ օրինակ՝ օլիմպիական խմբակ շնորհալիների միամսյակ, մրցույթներ, խրախուսման այլ գործիքներ | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ |
| • Ավանդական դարձած առարկայական միամսյակների պրակտիկայում ներգարվել նաև ոլորտի հայտնի մասնագետների, գիտնականների, փորձագետների | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, աշակերտներ, ոլորտի մասնագետներ, |
| • Ընդլայնել թուրքերենի խմբակի գործունեությունը՝ որպես կրթության ռազմավարական նշանակության բաղադրիչ | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, խմբակավար |
| • Ցածր առաջադիմությամբ աշակերտների համար | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական |

| | | |
|---|---|---|
| նախաձեռնել մասնագիտական կողմնորոշման առանձին նախաձեռնություններ՝ ուղղորդելով նրանց միջին մասնագիտական կրթությանը | | համակազմ, մեթոդական միավորումներ, դասղեկներ |
| • ԿԱՊԿՈՒ աշակերտների կարիքը վկայագրված է, անհրաժեշտ է, որ նրանք մասնակցեն դպրոցի բոլոր միջոցառումներին, այս համտեքստում առանձնակի կարևորել նրանց առավելագույն դերը՝ որպես մասնակից, որպես նախաձեռնող, որպես հանդիսատես | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, հոգեբան, ՏՄԱԿ |
| • Աշակերտների առավելագույն մասնակցությունը ապահովել դպրոցի այգու մշակման, աղբահավաքման և տեսակավորման աշխատանքներին՝ շեշտադրելով ուսումնահետազոտական և նախագծային ուսուցման մեթոդները | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, դասղեկներ, աշակերտներ |
| • <<Ձեռնարկատիրական կրթություն>> առարկայի շրջանակներում կազմակերպված օճառի արտադրությունը և իրացումը ընդլայնել, խթանել ձեռնարկատիրական և | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, աշակերտներ |

| | | |
|---|---|---|
| ֆինանսական կրթությունը՝ որպես տարբեր առարկաներում ինտեգրված տարրեր: | | |
| • Նոր չափորոշչով սահմանված առաջնահերթությունից ելնելով՝ խթանել պարտադիր խմբակների աշխատանքը՝ <<Առողջ ապրելակերպ>>, <<Մասնագիտական կողմորոշման ակումբ>>, <<ՆԶՊ>>: | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, աշակերտներ |
| • Գործընկեր դպրոցների հետ համագործակցելով կազմակերպել աշակերտական կոնֆերանսներ, նախագծային աշխատանքներ, փորձի փոխանակման տարբեր միջոցառումներ: | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, աշակերտներ, գործընկեր դպրոցներ |
| • Ռազմագիտության, քաղաքացիական պաշտպանության, հանրային առողջության թեմաներով շարունակել համագործակցել Խաղաղապահ զորամասի, Աբովյանի ոստիկանության, Մոնթե Մելքոնյան ռազմական վարժարանի, Վազգեն Սարգսյան ռազմական համալսարանի հետ՝ ապահովելով ռազմահայրենասիրական | 2023-2028թթ. | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, աշակերտներ, ՆԶՊ ուսուցիչ |

| | | |
|---|---|---|
| դաստիարակությունը: | | |
| • Կազմակերպել կարողունակությունների թեմատիկ փառատոններ՝ շեշտը դնելով բոլոր 8 կարողունակությունների վրա.<br>1. Լեզվական գրագիտություն<br>2. Սովորել սովորելու<br>3. Ինքնաճանաչողական և սոցիալական<br>4. Ժողովրդավարական և քաղաքացիական<br>5. Թվային և մեդիա<br>6. Մշակութային<br>7. Մաթեմատիկական և գիտատեխնիկական<br>8. Տնտեսական | Կազմել ժամանակացույց ըստ ուսումնական ամիսների | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, աշակերտներ |

## ՌԻՍԿԵՐ

1. Արտակարգ իրավիճակներ
2. Սոցիալական անարդարությունը
3. Ուսումնառության նկատմամբ հետաքրքրության նվազում
4. Օժտված երեխաների արտահոսք ֆիզմաթ կամ մասնավոր դպրոցներ
5. Ուսուցչի և դպրոցի նկատմամբ սխալ կարծրատիպերի ձևավորում հասարակության շրջանում
6. Բուլինգի դեպքերը դպրոցում

## ՄԵՂՄՈՂ՝

1.Առցանց, հեռավար ուսուցում

2.Գործողությունների հետևողական իրականացում

3.Կրթության որակի և կրթական միջավայրի բարելավում

4. Բուլինգի դեպքերի վաղ կանխարգելում

4.Ուսուցչի բարեվարքության կանոնների կիրառում

5. Հալածանքի բացառում, բազմակարծության մթնոլորտի ապահովում

# 1.8 ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական մանկավարժության մեջ մարդուն շրջապատող միջավայրը համարում են նրա զարգացման վրա ազդող ամենակարևոր գործոնը: Գերմանացի գիտնական Ադոլֆ Ֆեյերը (1879թ.-1960թթ.)իրավամբ գտնում է, որ կրթական միջավայրը պետք է դաստիարակի ոչ թե ինտելեկտուալներ, այլ կենդանի մարդկանց, որոնք հաջողությամբ գործում են ցանկացած սոցիալական միջավայրում:

Ժամանակակից աշխարհը մեծ տեղ է տալիս կրթական միջավայրի դաստիարակչական և մարդասիրական մոտեցման խնդրին, դրան սերտաճած բազմակարծիք ներառական. մասնակցային միջավայրի ձևավորման: Այս գործոններով է պայմանավորված սովորողի ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը, որից էլ բխում է ուսման նկատմամբ երեխայի վերաբերմունքը, նրա սոցիալականացումը, իրեն կոլեկտիվի, իսկ ապագայում՝ հասարակության լիարժեք անդամ համարելը:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Դպրոցը ապաքաղաքականացված ուսումնական հաստատություն է և քաղաքական վեճերի թատերաբեմ չէ: Բոլորը՝ թե՛ համայնքը, թե՛ ծնողները, թե՛ դպրոցը դա գիտակցում են:<br>• Դպրոցը ստեղծել է բարենպաստ կրթական միջավայր երեխայի ինքնազարգացմանը, ինքնադրսևորմանը նպաստող պայմաններ:<br>• Կրթական միջավայրը անվտանգ է ու հարմարավետ:<br>• Հաստատությունում պայմաններ են ստեղծվել ուսուցչի ֆիզիկական և հոգեբանական հարմարավետությունը | • Գնահատականների սուբյեկտիվություն և որպես պատժամիջոց կիրառելը:<br>• Պիտակավորել որպես վերջնական <<ախտորոշում>>՝ տալ որակավորում աշակերտին, հիշել ընտանիքի անդամներին, վերջնագրեր ներկայացնել (հազվադեպ հանդիպող, բայց ցավոք առկա երևույթ):<br>• Մանկավարժական աշխատողներ, որոնք խիստ ժուժկալ են, գովեստների, խրախուսանքի գործիքների կիրառման մեջ:<br>• Կան դաստիարակության որոշակի պակաս ունեցող |

| | |
|---|---|
| պահովելու համար։<br>• Ֆիզիկական միջավայրը գրավիչ է, մաքուր, հիգիենայի պահանջներին համապատասխան՝ առողջ և  անվտանգ։<br>• Հարմարեցված միջավայր դպրոցում առկա ԿԱՊԿՈՒ սովորողների համար հարմարեցված թեքահարթակներ<br>• Առկա են ֆիզիկական ակտիվության հատվածներ՝ (մարզահրապարակ, մարզադահլիճ, ազատ միջանցքներ )<br>• Կան հետազոտելու, խաղալու, ընթերցելու համար հատկացված հատվածներ՝ (դահլիճ, գրադարան, ընթերցասրահ)<br>• Դպրոցը կարևորում է միջավայրի դերը, որը նպաստում է երեխաների շրջանում համակեցության  և մշակույթի ձևավորմանը և կանոնների յուրացմանը։<br>• Ուսումնասիրում է յուրաքանչյուր երեխայի վարքագիծը, սոցիալական միջավայրի ազդեցությունը նրա վարքագծի վրա՝ հենված ժողովրդավարական, ազգային արժեքների վրա, դպրոցը հավատում է յուրաքանչյուր երեխայի զարգացման հնարավորություններին<br>• Մեր այգին նույնպես ուսումնասիրության միջավայր է՝ բնապահպանական դաստիարակության ապահովող<br>• Հաստատությունը աջակցում է սովորողներին, տիրապետում կոնֆլիկնտները կանխարգելելու, լուծելու մեթոդներին<br>• Դպրոցը խրախուսում է յուրաքանչյուր երեխայի նախասիրությունները, տաղանդը, հոբբին | կամ այսպես ասած <<դժվար երեխաներ>>, որոնց վրա մեծ ազդեցություն են թողում ընտանիքը, փողոցը, անորակ ֆիլմերն ու համացանցը։<br>• ԿԱՊԿՈՒ սովորողների համար ոչ լիարժեք հարամարեցումներ<br>• Լաբորա.տոր սարքավորումների մաշվածություն<br>• Գրադարանային ֆոնդի թարմացման անհրաժեշտություն<br>• Հրաձգարանի բացակայություն<br>• Չկան էլեկտրոնային ինտերակտիվ գրատախտակներ |

| | |
|---|---|
| • Դպրոցում գործում է հոգեբանի աջակցության ծառայություն<br>• Դպրոցը կարևորում է յուրաքանչյուր երեխային և դիտում նրան՝ որպես ԱՆՀԱՏ՝ անկախ նրա կրթական կարիքներից:<br>• Կազմակերպում են ընդհանուր և անհատական ցուցահանդեսներ, երգի և պարի խմբային և անհատական ելույթներ<br>• Արժեհամակարգային դաստիարակության և կրթության հարթակում իրականացվում են հայրենասիրական, բնապահպանական, մեդիա, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ:<br>• Դպրոցում առկա են աշակերտի վարքագծի կանոններ<br>• Հրավիրվում են ավագ դասարաններում ժողովներ, բանավեճեր <<Թրաֆիքինգ>>, <<Էկոլոգիական աղետներ>>, <<Հանդուրժողականություն>>, <<Ես ազատ եմ>> , <<Ճիշտ և կեղծ լուրեր կամ համացանցի վտանգները>>, որոնք խթանում են և ստեղծում են բազմակարծության մթնոլորտ<br>• Իրականացվում են հալածանքի դեպքերի բացահայտման ու կանխարգելման ուղղված աշխատանքներ<br>• Այս միջոցառումները բացում են աշակերտին և դարձնում առավել անկաշկանդ, շփվող, քննադատական և վերլուծական մտածելակերպ կրող<br>• Դպրոցում կարևորում են ազգային փոքրամասնությունների | |

| | |
|---|---|
| կրթական կարիքները՝ համագործակցված Հայկական Կարմիր Խաչի <<Առաքելություն Հայաստան>> ՀԿ-ի հետ<br>• Դպրոցում հարգում են աշակերտի անհատականությունը՝ անկախ նրա ազգությունից, տարիքային և անձնային առանձնահատկություններից, դավանանքից, ռասայից, սեռից, լեզվից, սոցիալական ծագումից, ֆիզիկական կարողություններից, անկախ ծնողների սոցիալական դիրքից և կարգավիճակից: | |

## ՆՊԱՏԱԿ

Երեխային կյանքին պատրաստել այդ կյանքի կառուցմանը մասնակից դարձնելու միջոցով:

Համագործակցված մանկավարժական և աշակերտական կոլեկտիվ՝ հանուն առողջ, համերաշխ, կրթական միջավայրի:

Անձնակողմնորոշված դաստիարակություն, երեխայի հետաքրքրությունների, պահանջմունքների, պոտենցիալ հնարավորությունների իմացություն և խթանում, դրանց իրականացման համար պայմանների ստեղծում:

Սովորողների կրթական, սոցիալական, առողջապահական իրավունքների պաշտպանություն

## ԽՆԴԻՐՆԵՐ

Ունենալ ուսումնական հաստատության տարածքում և նրա շուրջը գտնվող նյութատեխնիկական, խորհրդանշային, տեղեկատվական, մանկավարժահոգեբանական պայմանների ամբողջական միջավայր ունենալը, դրա նկատմամբ վերաբերմունքի

դաստիարակություն, բոլոր սովորողների ինքնազարգացման, ինքնաիրացման համար հավասար և մատչելի պայմանների հնարավորությունների ստեղծում:

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ |
|---|---|---|
| Մանկավարժական խորհրդի հաստատմանը ներկայացնել մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները | Մանկավարժական խորհրդի առաջին նիստ | Տնօրեն, մանկավարժական խորհուրդ, կառավարման խորհուրդ |
| Աշակերտի վարքագծի նոր կանոններ սահմանել չափորոշչային պահանջներին համապատասխան | 2023թ. սեպտեմբեր | Տնօրեն, տեղակալներ, մանկավարժական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ |
